



## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

### Ամերիկայի Նահանջող Դիրքերը

Անցնող շաբաթույնի ընթացքին Համալուրկի մեջ գումարուեցաւ տնտեսապէս ամենէն հզօր քսան երկիրներու գագաթի ժողովը, որ ծանօթ է որպէս G20: Այս ժողովին առաջին անգամ ըլլալով մասնակցեցաւ ներքին սկանդալներու մեջ մխրճուած Միացեալ Նահանգներու նախագահ Տոնալտ Թրամփ, որու ընդհանուր պահուածքը ու հարցերուն անգիտակ ու անտարբեր վերաբերմունքը, սկսած է մտահոգել քաղաքական շրջանակները: Շատեր արդէն իսկ եկած են այն եզրակացութեան, որ Թրամփի օրօք Ամերիկան սկսած է կորսնցնել իր առաջնորդողի ու օրակարգ պարտադրողի իր նախկին դիրքերը: Դեռատեսիլի վրայ երեւցող տեսարաններուն մէջ իսկ, նկատելի էին Թրամփի նկատմամբ անտեսուածի եւ անյարգալից վերաբերմունքի երեւոյթներ:

Այս իրավիճակի ցայտուն օրինակները դրսևորուեցան երբ մնացեալ 19 երկիրներու ղեկավարները վերահաստատեցին իրենց յամեմատաբար «Փարիզի Կլիմայի Համաձայնագիրին», որմէ դուրս գալու որոշում վերջերս կայացուցած էր Թրամփի վարչակազմը: Նոյն ժողովը նաեւ մերժեց Գլոսիայի Զորային նկատմամբ միացեալ դիրք ճշդելու Ամերիկայի առաջարկը: Ազատ տնտեսական գոտիներէն դուրս գալու Թրամփի ծրագիրներուն ի պատասխան ճափոն եւ Եւրոպայ ստորագրեցին համաձայնագիր, առանց նկատի առնելու Ամերիկայի կարծիքը:


Այս ժողովին առջնութեամբ տեղի ունեցաւ Փութին-Թրամփ առաջին դէմ առ դէմ հանդիպումը, որու առաջին նախանշաններուն համաձայն, հոն եւս Ռուսաստանի նախագահն է որ կարողացած է զիջումներ ապահովել Թրամփէն, առանց դիմացը տալու որեւէ բան, ըլլայ այդ Ուքրաինայի Ստրիպակի հարցերով եւ կամ Ամերիկեան ընտրութիւններուն միջամտելու գծով:

Պաշտօնավարման կարճ ամիսներու ընթացքին Թրամփ կարողացաւ մեծ հարուած հասցնել Ամերիկայի միջազգային հեղինակութեան ու վարկին: «Թուիթթեան» գրառումներով ու յարափոփոխութեան կէտերով արտաքին քաղաքականութիւն վարելու ոճը, Ամերիկայի անհաղթական դաշնակիցները մատնեած են շփոթի: Անոնք այժմ սկսած են անդրադառնալ, որ այլեւս կարելի չէ վստահիլ ու ամբողջութեամբ ապահովիլ Ամերիկային ու անոր հզօրութեան:

Թրամփի որդեգրած «Ամերիկան ամենէն առաջ» նախընտրական լօզունգը ու անոր կիրառումը սկսած է մեկուսացնել առաջնորդել այս երկիրը, պատճառ դառնալով որ ան նահանջ արձանագրէ աշխարհի դեկավարի իր նախկին դիրքերէն:

«ՄԱՍԻՍ»

### ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Հրապարակեց Հայաստանի Ընտրութիւններուն Վերաբերեալ Վերջնական Զեկոյցը



Յուլիս 10-ին Հրապարակուեցաւ Եւրոպական տարբեր կառույցները համախմբող՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի վերջնական զեկոյցը, Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններու վերաբերեալ: Ըստ զեկոյցին, ընտրակաշառքը, պետական պաշտօնեաներու վրայ գործադրուած ճնշումները՝ դպրոցներու եւ հիւանդանոցներու մէջ, ինչպէս նաեւ որոշ կուսակցութիւններու օգտին ձայն ապահովելու նպատակով ընտրողներու ահաբեկման մասին պնդումները միջանոց են Ապրիլ 2-ին Հայաստանի մէջ տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններու ընթացքը:

Եւրոպայի անվտանգութեան եւ համագործակցութեան կազմակերպութեան ժողովրդավարական հաստատութիւններու եւ մարդու իրաւունքներու գրասենեակի

(ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) հայաստանեան ընտրութիւններու դիտորդական առաքելութեան հրապարակած վերջնական զեկոյցին մէջ ըսուած է, «Լայնածաւալ ընտրակաշառքի մասին պնդումները եւ ընտրողներու նկատմամբ ճնշումներն ու ահաբեկումը բացասաբար ազդած են ընտրարշաւին վրայ՝ աճեցնելով ընտրական գործընթացին նկատմամբ արդէն իսկ առկայ անվտանգութիւնը»: Դիտորդներու գնահատմամբ, ընտրարշաւին մէջ տեղ գտած այս խնդիրները եւ ընտրութիւններու օրն ու անկէ ետք բուռնացող ճնշումները կասկածները մտավախութիւններ յառաջացուցած են ընտրողներու ազատ կամքի արտայայտման իրաւունքի առումով:

Շար.ը էջ 5

### Եւրոպացի Խորհրդարանականները Խիստ Մտահոգ Են Ղարաբաղեան Հակամարտութեան Սասկացմամբ

«Եւրոմիութիւնը պէտք է աւելի աշխուժ դեր ստանձնէ զարաբաղեան խնդրի կարգաւորման հարցին մէջ», - Յուլիս 10-ին յայտարարած են Եւրոխորհրդարանի պատգամաւորները՝ մտահոգութիւն յայտնելով շփման գիծին վրայ արձանագրուած վերջին լարուածութեան առումով:

Դատապարտելով հակամարտութեան գոտիին վրայ ռազմական գործողութիւններու վերակսումը, պատգամաւորներէն շատեր անգամ կը յորդորէին Եւրոմիութեան արտաքին քաղաքական գերատեսչութիւնը՝ իր ձեռքը վերցնել Մինսկի խումբին մէջ համանախագահող Ֆրանսայի յանձնառութիւնը:

«Երբ կը կարգամ վերջին նորութիւններն Ատրպէյճանի մէջ արձանագրուած զոհերուն մասին, իսկապէս շատ մեծ ցաւ կ'ապրիմ, բայց նոյն չափով կը դատապարտեմ ատրպէյճանական կողմի հաղորդումները՝ հայկական բնակա-

վայրերը ռմբակոծելու վերաբերեալ: Այս խնդրի լուծումը չէ, այս եւս մէկ քայլ է, իրավիճակն ալ աւելի սրելու ուղղութեամբ», - յայտարարած է լիթուանիացի ֆեթրաս Աուսթեիչիուս:

ԵՄ արտաքին գործոց նախարարութեան պաշտօնեան՝ Արեւելեան գործընկերութեան բաժնի ղեկավար Տիրք Շուպէլ յայտարարած է, որ Մինսկի խումբի արդիւնքներն այնքան ալ գոհացնող չեն: Սակայն ան միաժամանակ հաստատած է, որ Պրիւքսէլ առայժմ մտադիր չէ կտրուկ փոփոխութիւններու երթալու եւ պիտի շարունակէ կարգաւորման հետեւիլ տարածաշրջանին մէջ իր յատուկ ներկայացուցիչին միջոցով:

«Իսկապէս, Մինսկի խումբի արձանագրած արդիւնքները թէեւ այնքան տպաւորիչ չեն, որքան որոշ մարդիկ կը ցանկային: Բայց

Շար.ը էջ 4

### 170 Նորագիրներ Միացան Հնչակեան Կուսակցութեան Շարքերը

«Եւրոպայի» մէջ տեղի ունեցած արարողութեան մը ընթացքին, 170 նորագիրներ իրենց երդումը տալով միացած են Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան շարքերուն:

Կուսակցութեան կարգի համաձայն՝ նորագիրները երդուեցին կեանքի գնով հաւատարիմ ըլլալ Հայրենիքին, Ժողովուրդին եւ Հնչակեան կուսակցութեան:

ՄԴՀԿ Հայաստանի վարչութեան ատենապետ ընկ. Նարեկ Գալստեան, դիմելով նորագիրներուն, նախ ողջունեց անոնց մուտքը ՄԴՀԿ-ի շարքերը, ապա նկատեց, որ իբրեւ Համահայկական կուսակցութիւն, ՄԴՀԿ բացառիկ առաքելութիւն ունի թէ՛ Հայաստանի եւ թէ՛ բովանդակ Հայ Ժողովուրդի կեանքին ներս:

«Դուք մուտք էք գործում մի քաղաքական ընտանիք, որն արեան գնով 130 տարի ապացուցում է իր անմնացող նուիրումը Հայաստանին եւ Հայ Ժողովրդին: Դուք մուտք էք գործում մի կուսակցութիւն, որ այսուհետ նոյնպէս պատրաստ է իր լաւագոյն զաւակներին գոհել յանուն Հայաստանի եւ Արցախի անվտանգութեան: Ինչ վերաբերում է Հայաստանի ներքին քաղաքական դաշտին, ապա մենք պատասխանատու քաղաքական կազմակերպութիւն ենք, որ պատրաստ է օրնիբուն աշխատել՝ պաշտպանելու մեր երկրի քաղաքացիների կենսական շահերը»:

«Եւրոպայի» գիտութեան պանթէոնին մէջ կայացած արարողութեան, մասնակցած են ՄԴՀԿ կենտրոնական վարչութեան անդամներ՝ Սեդրակ Աճէմեանը եւ Վազգէն Գալթաքեանը:

### Այսուհետեւ Թուրքիոյ Խորհրդարանի Անդամները Կրնան Տուգանուիլ Ցեղասպանութեան Մասին Խօսելու Պարագային

Թուրքիոյ խորհրդարանի կանոնակարգին մէջ անակնկալ դրոյթներ յայտնուած են. մասնաւորապէս, պատգամաւորներն այսուհետեւ կրնան տուգանուիլ Հայոց Ցեղասպանութեան մասին խօսելու համար, կը հաղորդէ թրքական «Հուրրիէթ»-ը:

Իշխող «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութեան եւ դաշնային «Ազգային Շարժում» կուսակցութեան կողմէ պատրաստուած է երկրի խորհրդարանին մէջ պատգամաւորներու վարքի, նիստերու կանոնակարգի ու արտաքին տեսքի հետ կապուած փոփոխութիւններու փաթեթ:

Շար.ը էջ 4



ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

«ՍԵՆ Կատու»՝ Պուտինի ու Ալիևի միջև

ՄԵՏԱՔՄԻԱ ՇԱԼՈՒՆՑ

Օրերս ուշագրավ տեղեկություն ստացուեց Մոսկովայից, որն իր հերթի ապացուցում է, որ վերջին շրջանում Ռուսաստան-Ատրպեյջան յարաբերություններն այնքան էլ հարթ չեն:

Ռուսաստանը Պաքուից պահանջել է դադարեցնել հայկական ազգանուններով ՌԴ քաղաքացիների հանդէպ խտրական վերաբերմունքը, հաղորդեց ռուսաստանեան TACC գործակալությունը: «Հարկադրուած ենք փաստել, որ Ատրպեյջան ժամանող Ռուսաստանի քաղաքացիներն իսկապէս խտրական վերաբերմունքի են արժանանում՝ պայմանաւորուած ազգային պատկանելութեամբ», - ըստ գործակալութեան, յայտնել են ՌԴ արտաքին գերատեսչութիւնից, վկայաբերելով մի շարք օրինակներ: «Շարունակուած ենք պահանջել՝ դադարեցնել այդ մտահոգիչ գործելակերպը, ինչն անհամատեղելի է երկու երկրների միջեւ բարեկամական յարաբերութիւնների հետ», - նաեւ նշել են ՌԴ արտգործնախարարութիւնում, յաւելելով, թէ ստեղծուած իրավիճակից «բնականաբար կ'արուեն հետեւութիւններ»:

Յղում անելով ՌԴ արտաքին գերատեսչութեան տուեալներին, գործակալութիւնը նշում է, որ այս տարու աչկայից Պաքուն մերժել է հայկական ազգանուամբ 25 ՌԴ քաղաքացիներին մուտքն Ատրպեյջան, նրանց ժամերով սպասեցրել են, մի շարք դէպքերում՝ զրկելով անուելու, երբեմն անգամ ջուր խմելու եւ բուժօգնութիւն տանալու հնարաւորութիւնից, այնուհետեւ իրենց, իսկ հաշուին արտաքսել են երկրից:

Նման դէպքերում իբրեւ հիմնաւորում է նշուել քաղաքացիների հայկական ազգանունը, սակայն

եղել են դէպքեր, երբ Ատրպեյջանում հարցաքննել են նաեւ ռուսական ազգանուամբ մարդկանց՝ «հայկական արմատները բացայայտելու նպատակով», նշում էր TACC-ը: Ըստ գործակալութեան, Ռուսաստանի ԱԳՆ-ում նաեւ նշել են, որ նման փաստերի հետ կապուած բազմիցս բողոքի նոտաներ են յղել Պաքուին, սակայն դրանք «ընկալելի եւ բաւարար պատասխան» չեն ստացել: TACC-ը նաեւ տեղեկացնում է, որ ՌԴ ԱԳՆ հաղորդման համաձայն, Ատրպեյջանի արտգործնախարարութիւնից հետեւալ պատասխանն է ստացուել. «Նման անցանկալի միջադէպերի կանխման համար Ատրպեյջանը հարկադրուած է մի շարք մարդկանց հանդէպ կիրառել համապատասխան կարգաւորումներ»:

Չուշացաւ նաեւ Պաքուի արձագանքը: Ատրպեյջանի ԱԳՆ խոսնակ Հիքմետ Հաջիբեյ «պատասխանել է» հայկական ազգանուններով ՌԴ քաղաքացիներին խտրականութեան ենթարկելու վերաբերել Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան մեղադրանքներին: «Հաջիբեյ փոխանակ բացատրելով, թէ ինչու է Պաքուն նման սահմանափակումներ մտցրել, սկսել է պատմել այն մասին, որ «Ատրպեյջանը հպարտանում է իր բազմամշակութային աւանդոյթներով, որ ամբողջ աշխարհի համար օրինակ են ծառայում», - գրում է Ատրպեյջանական անկախ գործակալութիւնը: «Յաւաք, հայազգի որոշ դէմքեր էթնիկ հողի վրայ թշնամական վերաբերմունք են դրսեւորում, այդ պատճառով էլ մենք որոշ միջոցաւորումներ ենք իրականացնում», - աստրպեյջանական դիւանագիտական գերատեսչութեան խօսնակի խօսքերն է մէջբերում «Թուրան»-ը: Վերջին մէկ ամսում ռուսատրպեյջանական յարաբերութիւն-

ներում սա խմորումների երկրորդ դէպքն է: Մայիսի վերջին Ատրպեյջանը դատապարտեց եւ քաղաքական որոշում որակեց Ռուսաստանի գերագոյն դատարանի կողմից «Համառուսաստանեան ատրպեյջանական կոնգրես» հասարակական կազմակերպութեան լուծարումը:

Ատրպեյջանի ԱԳՆ-ն ոչ-բարեկամական քայլ» որակելով բարեկամ Ռուսաստանի իշխանութիւնների այդ որոշումը, յայտարարեց, թէ այդ կերպ Մոսկովան աջակցութիւն է ցուցաբերում Ռուսաստանի հայերի միութեանը: «Այդ ամէնը կարող է բացասաբար ազդել դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման շրջանակներում Ռուսաստանի ստանձնած միջնորդական դերի վրայ», - մասնաւորապէս ասել է ատրպեյջանական դիւանագիտական գերատեսչութեան խօսնակ Հիքմետ Հաջիբեյ:

Ռուսաստանում ատրպեյջանական դեսպանութեան եւ առհասարակ պաշտօնական Պաքուի աջակցութիւնը վայելող կազմակերպութիւնը տարիներ շարունակ զբաղուել է մշակութային, կրթական, տնտեսական ծրագրերով: Բացի այդ, ինչպէս նշում է կոնգրեսի կայքում, կառուցել լուրջ ուշադրութիւն էր յատկացնում Ռուսաստանում բնակուող ատրպեյջանցիների սոցիալական շահերի եւ իրաւունքների պաշտպանութեանը: Կոնգրեսն իր գործունէութեան առաջին իսկ օրուանից ստացել է Ռուսաստանի եւ Ատրպեյջանի բարձրագոյն իշխանութիւնների աջակցութիւնը, նաեւ ասուում էր ատրպեյջանական կառուցի կայքէջում:

Ռուսաստանի գերագոյն դատարանը բաւարարել է արդարադատութեան նախարարութեան հայցը՝ չեղարկել «Համառուսաստանեան ատրպեյջանական կոնգ-

րես» հասարակական կազմակերպութեան գրանցումը:

Իսկ ահա Մոսկովան «անընդունելի» է համարում Պաքուի վերջին յայտարարութիւնները: Ռուսաստանի արտգործնախարարութիւնն անընդունելի է որակել պաշտօնական Պաքուից հնչող հայտարարութիւնները, թէ «Համառուսաստանեան ատրպեյջանական կոնգրես»-ը լուծարելով՝ Ռուսաստանի գերագոյն դատարանը քաղաքական որոշում է կայացրել: «Մոսկովան ատրպեյջանցիների կասկածելի խորհուրդների կարիքը չունի՝ իր երկրի ներսում ազգամիջեան քաղաքականութեանը վերաբերող հարցերում», ասել էր ՌԴ ԱԳՆ պաշտօնական ներկայացուցիչը:

«Տարօրինակ է, երբ Ռուսաստանի դատարանի որոշումը՝ կայացուած Ռուսաստանում գրանցուած կազմակերպութեան նկատմամբ, գնահատուած է՝ որպէս ոչ բարեկամական քայլ Ատրպեյջանի նկատմամբ, եւ իհարկէ՝ ցաւալի է, որ Ատրպեյջանի արտգործնախարարութիւնը բարձրաձայնում է դա ու այս ամէնի հետեւում կրկին հայկական հետք է տեսնում», - ասել էր ՌԴ ԱԳՆ խօսնակ Մարիա Զախարովան: Նշենք, որ Ռուսաստանում գրանցուած ատրպեյջանական կազմակերպութիւնը չեղարկելու հայցով ՌԴ գերագոյն դատարան էր դիմել Արդարադատութեան նախարարութիւնը, պնդելով, որ այդ կառուցի գործունէութեան որոշ դրոյթներ չեն համապատասխանում ռուսաստանեան օրէնսդրութեանը: Ատրպեյջանի ԱԳՆ-ն, մինչդեռ, ռուսաստանեան դատարանի որոշումը ոչ բարեկամական էր գնահատել՝ պնդելով, թէ այդ քայլով Մոսկովան աջակցութիւն է ցուցաբերում Ռուսաստանի հայերի միութեանը:

«ՀԱՅԵԼԻ»

Սերժ Սարգսեանի Տուած Հաւաստիացումները Չեն Գործում

«Սասնա ծռերի» ու ժիրայր Սէֆիրեանի դատավարութիւնները տիրուր եզրակացութիւնների տեղիք են տալիս՝ կասկածի տակ դնելով դատական գործընթացի օբեկտիւութիւնն ու անաչառութիւնը: Ու եթէ անգամ այս գործերի հիմքում իրաւական որոշ հիմնաւորումներ կան, ապա երկու գործերով դատաւորներն էլ իրենց պահուածքով գրոյթն են հաւասարեցնում այդ ամենը:

Մինչդեռ, յիշեցնենք, նախորդ տարու աչ ամրանը, երբ ոստիկանութեան ՊՊԾ գունդը գրաւած «Սասնա ծռեր» խմբի անդամները որոշեցին յանձնուել իրաւապահներին, Սերժ Սարգսեանը խօսել էր կատարուածի մասին՝ ասելով. «Առաջին հերթին պէտք է իրականացուի մանրագնին հետաքննութիւն, համակողմանի եւ անաչառ քննութիւն, բաց դատավարութիւն: Իւրաքանչիւր ոք պէտք է պատասխան տա իր արարքների համար միայն ու միայն օրէնքի առաջ: Որեւէ այլ դրսեւորում չի լինելու, անձնական վրէժխնդրութեան բոլոր փորձերը կասեցուելու են օրէնքի ուժով»:

Այս օրերին տեղի ունեցողը, սակայն, վկայում է հակառակի մասին. Սերժ Սարգսեանի տուած հաւաստիացումները չեն գործում, եւ երկու գործով էլ ոչ թէ արդա-

րադատութիւն է իրականացուած, այլ այդ ամէնը քաղաքական վրէժխնդրութեան փորձեր են:

Թէեւ Սերժ Սարգսեանը խոստանում էր անաչառ քննութիւն, աւելի խտացուեցին «Սասնա ծռերի» անդամներից չորսի մեղադրանքը՝ նրանց վերագրելով նաեւ ՊՊԾ գնդի տարածքում եղած բանկոմատից մօտ 14 մլն դրամ չափաւորութիւնը: Այս պատմութեան մէջ տարօրինակն այն է, որ չափաւորութեան 14 մլն դրամն այդպէս էլ չի յայտնաբերուել, պաշտօնական հաղորդագրութիւն եղաւ այն մասին, որ խմբի անդամներից Արթուր Սողոմոնեանի կօշիկի մէջից 300 հազար դրամ է յայտնաբերուել եւ վերջ:

Այս օրերին դատարանում տեղի ունեցող իրադարձութիւններն էլ յուշում են, որ իշխանութիւնները նախապատրաստուած են դռնփակ դատավարութեան: Պատահական չեն դատարան մտնելիս փաստաբաններին խուզարկելու, այդպէս իրավիճակը սաղորդելու փորձերը, միւս կողմից՝ դատաւորներն էլ իրենց հերթին են փորձում լարուածութիւն մտցնել: Այնպէս որ,

յօդս կը ցնդեն բաց դատավարութիւն իրականացնելու մասին խոստումները: Եւ վերջապէս, ամենակոպիտ կերպով անտեսուած է «Սասնա ծռերի» անդամների նկատմամբ անձնական վրէժխնդրութեան բոլոր փորձերն օրէնքով կասեցնելու Սերժ Սարգսեանի հրահանգը:

Ինչպէս յայտնի է՝ դատարանի՝ կալանաւորներին պահելու համար յատկացուած յատուկ վայրում ոստիկանները գազանաբար բռնութիւն են կիրառել ամբաստանեալներից չորսի նկատմամբ: Չնայած կցկտուր հերքումներին՝ իրաւապահներն այդպէս էլ հիմնաւոր փաստարկ չեն ներկայացրել դատավարութիւնից յետոյ «Սասնայ ծռեր» խմբաւորման անդամներին դատավարութիւնից յետոյ խոշտանգելու ահազանգերի վերաբերել: Փոխարէնը արգելուել են բռնութեան ենթարկուածների հետ կալանավայրերում մշտադիտարկում իրականացնող խմբի տեսակցութիւնները, ինչն էլ աւելի է հիմնաւորում խոշտանգումների մասին ահազանգերը:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մեջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻՎԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՉԱՎԵԱՆ
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՂԵ ԱՏԱՊԱՐԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY



### ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Աժ ԸՆՏՐՈՒԹԻՆՆԵՐՈՒ ԸՆԹԱԳՔԻՆ ՈՐՈՇ ԹԻՒԵՐ ԶԵՆ ԴԱՄԱՎԱՏԱՄԱՍԻԱՆԵՐ ԻՐԱՐ

Ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրութիւններու ընթացքին որոշ տեղամասերու մէջ ընտրողներու ստորագրութիւններուն եւ քուէատուփերուն մէջ առկայ քուէաթերթիկներու թիւերը չեն համապատասխաներ՝ կ'արձանագրէ «Թրանսփարենսի Ինթըրնաշնլը» հակակաշառակերութեան կեդրոնը:



Քայաստանցիներ կը մասնակցին քուէարկութեան

Ծրագիրներու ղեկավար Վարուժան Հոկտանեան, որ ուսումնասիրած է Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովի (ԿԸՅ) հրապարակած յիշեալ թիւերը, ըսած է որ, այս խնդիր է, որ լուրջ կասկածներու տեղի կու տայ եւ կրնայ վկայել ընտրատարածքային ստուգումներու մասին:

«Այդպիսի 393 տեղամաս կայ, որոնցում ստորագրութիւնները եւ վաւերութիւնը քուէաթերթիկներին թիւերը միմեանց չեն համապատասխանել»,- ըսած է Վարուժան Հոկտանեան:

Անոր խօսքով՝ 170 տեղամասերուն մէջ ալ տարբերուած են ելեկտրոնային սարքերէն տրուած կտրոններու եւ ընտրողներու ստորագրած ցուցակներու թիւերը: Հակակաշառակերութեան կեդրոնի մասնագէտը նշած է որ, այդպիսի տարբերութիւններ իրականութեան մէջ պէտք է ըլլան, մինչդեռ, ԿԸՅ-ն այն կ'որակէ որպէս անձշտութիւն ու կը պնդէ, որ ընտրութեան արդիւնքներու վրայ անոնք ազդեցութիւն ունենալ չեն կրնար: «Մենք պէտք է ոչ թէ մօտենանք այն կանխավարկածով, թէ չեն ազդի արդիւնքի վրայ, խնդիրը դա չէ, այլ այն, որ այդ երեւոյթը պէտք է ինչ-որ կերպ պատժուի եթէ կայ տարբերութիւն, ուրեմն պէտք է կատարուի հետաքննութիւն»,- ԿԸՀ-ին հակադարձած է Հոկտանեանը:

Նրա դիտարկմամբ, հենց ընտրութիւններու օրը մի «տարօրինակ երեւոյթ» էլ է նկատուել: Երբ յանձնաժողովը 3 ժամը մէկ ամփոփում էր մասնակցութեան ցուցանիշները, կենտրոնի մասնագէտներն այդ ընթացքում հաշուարկ-

ներ են կատարել ու եկել այն եզրահանգման, որ 181 տեղամասերում ընտրողները ռեկորդային արագութեամբ են քուէարկել ու դուրս եկել:

Հոկտանեան բացատրած է՝ ըստ ընդունուած միջազգային փորձի՝ մէկ ընտրողի քուէարկութեան համար պահանջուող նուազագոյն ժամանակը 50 երկվայրկեան է, մինչդեռ՝ այդ տեղամասերուն մէջ մէկ ընտրողին սպասարկած են անգամ 36-38 վայրկեանի մէջ. «Սա կարող է լինել այն բանի հետեւանքը, որ կամ՝ բացառապէս կերպով լցոնել են քուէատուփը, կամ էլ մէկ այլ տարբերակ՝ յանձնաժողովի համապատասխան անդամները ստորագրում են, որից յետոյ, արդէն քուէներին հաշուարկի ժամանակ, համապատասխան թուով քուէաթերթիկներ են աւելացում»:

Հակակաշառակերութեան կեդրոնի ներկայացուցիչը սպասելիքներ չունի, որ իրաւապահ մարմինները կ'արձագանգեն իրենց զեկոյցին մէջ տեղ գտած բացայայտումներուն: Անոր համոզմամբ՝ ընտրակեղծարարութիւնը համակարգային բնոյթ կը կրէ: Ըստ Հոկտանեանի, սակայն, բացայայտուած տուեալները կրնան լրացուցիչ փաստարկ դառնալ այն ընդդիմադիր կուսակցութիւններու ձեռքին, որոնք կ'ուզեն վիճարկել արդիւնքները:

«Թրանսփարենսի Ինթըրնաշնլը»-ի ծրագիրներու ղեկավարը վստահ է՝ ընտրակաշառքի բաժանումն ու վարչական ներուժի կիրառումը ազդեցութիւն ունեցած են ընտրութիւններուն արդիւնքներուն վրայ:

## «Քաղաքաւոր Քաղաքացիներ Թոյլ Տուած Են Յանցագործներու Մտնել Իրենց Ննջարանները»,- Նիկոլ Փաշինեան

ՀՀ ԱԺ-ի կողմէ կը քննարկուի «Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովի գործունէութեան մասին» հարցումը: «ԵԼՔ» խմբակցութեան ղեկավար Նիկոլ Փաշինեան նկատել տուաւ, որ ՀՀԿ-ականները կը սիրեն անընդհատ կրկնել, թէ իրենք ստացած են ժողովուրդի վստահութեան քուէն, եւ առաջարկեց հասկնալ, թէ ինչ եւ ինչպէս ստացած են ՀՀԿ-ականները:

«Երեւանի աւազանու ընտրութիւններին նախընտրական քարոզարշաւի վերջին օրը անգամներ ստացուեցին, որ ՀՀԿ բոլոր շտաբներում բաժանուում են ընտրակաշառքներ: Առաջին անգամն էր, երբ մեզ յաջողուեց ձեռք բերել կոնկրէտ ապացոյցներ»,- յայտնեց ան, ներկայացնելով իրենց յայտնաբերած քանի մը փաստաթուղ-

թերը, թէ օրինակ, ինչ պէտք է ընէ ինքզինք յարգող ընտրակաշառք բաժնողը:

«Փաստաթղթերից մէկից իմանում ենք, որ 4/01 ընտրական տեղամասի պատասխանատու Յովհաննէս Գալստեանը 6 միլիոն 250 հազար դրամ է ստացել՝ 600 կողմ ձայն սպասուելու համար, 4/15 տեղամասի պատասխանատու Մինաս Շահինեանը 6 միլիոն 250 հազար դրամ է ստացել՝ 600 ձայն սպասուելու համար»,- յայտնեց ան:

«Գործում է յանցաւոր խումբ՝ ՀՀԿ-ն, որի ղեկավարը Սերժ Սարգսեանն է: Ամենամեծ փրոպագենդային է, որ ՀՀ հարիւր հազարաւոր քաղաքացիները բազմաթիւ ստահակների եւ յանցագործների թոյլ են տուել մտնել իրենց ննջարաններ եւ բաղնիքներ»:

## Երիտասարդութեան Արտագաղթի Առաջին Պատճառը Գործազրկութիւնն Է

Երիտասարդութեան արտագաղթի առաջին պատճառը արդէն 40,2 տոկոսի հասած գործազրկութիւնն է, որ մօտ 2,5 անգամ բարձր է գործազրկութեան միջին մակարդակէն: Այս մասին լրագրողներու հետ հանդիպման ժամանակ ըսած է իրաւաբան, գրող, հրատարակախօս Հայկազ Մակարեան:



Երեւանի Զուարթնոց օդակայանը արտագաղթի ճամբայ

Անոր խօսքով, 2017 թուականին ՀՀ-ի մէջ ԱՄԿ (Աշխատանքի միջազգային կազմակերպութիւն) տուեալներով 15-24 տարեկան անաշխատանք կը համարուին տղամարդոց մօտաւորապէս 17,3 եւ աղջիկներու 17,7 տոկոսը, որ խայտառակ ցուցանիշ է:

«Մօտաւորապէս 120-130 հազար եւ աւելի բանիմաց, փոթեցիւ ալ այս կամ այն ոլորտի մասնագէտ անձը չուսալքուած է այս միջոցառումը: Պատճառը բռնարարական ոստիկանութեան կողմից ոչ չաւուր պատշաճի կատարուելիք գործողութիւններն են, որ երիտասարդի մէջ հրասթափութիւն են առաջացնում, այդ թւում եւ իմ, որովհետեւ եթէ երիտասարդը տեսնում է՝ ինչպէս են ոստիկանները վարուում իր հայրենակցի հետ,

էս ճնշուածութեան, անտարբերութեան, իշխանութեան այս օգտապաշտ եւ ոչ արժանավայել ազդեցութիւնների տակ լքում է երկիրը»,- ըսած է Մակարեան:

Ըստ բանախօսի, պէտք է երիտասարդական կազմակերպութիւններ բացուին, երիտասարդական ծրագիրներ իրականացուին: «Մեր սփիւռքահայ բարերարները պէտք է ստեղծեն անկախ փորձագէտների խումբ, որ չի կարող կապ ունենալ այստեղի իշխանական ապարատի հետ, որովհետեւ իշխանութեան ոչ մի ներկայացուցիչ, որ պէտք է զբաղուի երիտասարդների հիմնահարցերով, չի անում դա: Մենք ունենք Սփորթի եւ երիտասարդութեան նախարարութիւն, որի գործունէութիւնը, որպէս այդպիսին, չտեսայ»,- աւելցուցած է Մակարեան:

## Ազգային Ժողովը Քաստատեց 2016-ի Պետական Պիւտճի Կատարողականը

ՀՀ Ազգային ժողովը 53 կողմ, 22 դէմ, 1 ձեռնպահ ձայներու շարքերակցութեամբ հաստատեց Հայաստանի 2016 թուականի պետական պիւտճի կատարման հաշուետուութիւնը:

Նախքան քուէարկութիւնը «ԵԼՔ» խմբակցութեան ղեկավար Նիկոլ Փաշինեանը յայտարարած է, որ դաշինքը դէմ է. «ԵԼՔ»-ը դէմ է պիւտճի կատարման հաշուետուութեանը, եւ կարծում եմ՝ ճիշդ կը լինէր, որ ընդդիմութիւնը չքուէարկեր, քանի որ խորհրդարանական մեծամասնութեան ներկայացուցիչները ձայները բաւարար չեն, որպէսզի կատարողականը հաստատուի: Մենք դէմ ենք, եւ որպէս-

զի կատարողականը չհաստատուի, մենք առաջարկում ենք չմասնակցել քուէարկութեանը, որպէսզի այս որոշումը չանցնի: Այսինքն՝ դէմ ենք ոչ միայն քուէարկութեամբ, այլեւ ըստ օրէնքի հաստատուի»:

«Մտուկեան» խմբակցութեան քարտուղար Վահէ Էմֆիլանդեանն ալ նշած է, որ իրենց դիրքորոշումը եւս դէմ է, բայց չքուէարկելու համար որեւէ հիմքեր չեն տեսներ:

Քուէարկութեանէն ետք Նիկոլ Փաշինեանը յայտարարած է. «Ես ուզում եմ արձանագրել, որ մեր հաշուարկը ճիշդ էր՝ եթէ ընդդիմութիւնը չքուէարկէր, կատարողականը չէր անցնում, որովհետեւ 52 կողմը բաւարար չէր»:

## «Ոչինչ Կրնայ Արդարացնել Ֆիզիկական Բռնութիւնը մեղադրեալներու նկատմամբ»

«Ծանր յանցագործութեան մէջ մեղադրուող հայկական ընդդիմութեան 4 անդամներ մեղադրած են ոստիկանները մեկուսարանին մէջ զիրենք ծեծի ենթարկելու մէջ: Իշխանութիւնները պարտաւոր են իրականացնել արագ, մանրակրկիտ եւ արդիւնաւէտ քննութիւն եւ պատասխանատուութեան ենթարկել մեղաւորները»: Այս մասին ըստած է «Human Rights Watch» իրաւապաշտպան կազմակերպութեան հաղորդագրութեան մէջ:

Դատապարտեալները տարբեր վնասուածքներ ու կապտուկներ ստացած են իրենց դէմքին, գլխուն, որովայնին, մէջքին եւ ոտքերուն: «Մեղադրեալներու նկատմամբ վատ վերաբերմունքը խստօրէն արգելուած է որեւէ պարագայի, այս պարզ է, եւ անկախ այն բանէն, թէ այդ մարդիկ ինչ յանցագործութիւն գոր-

ծած են կամ ինչի մէջ կը մեղադրուին, ոչինչ կրնայ արդարացնել ֆիզիկական բռնութիւնը մեղադրեալներուն նկատմամբ»,- ըսած է կազմակերպութեան Հարաւային Կովկասի հարցերով ղեկավար Կիրիլ Կոկիա, աւելցնելով, որ իշխանութիւնները յստակ արտայայտուած պարտաւորութիւն ունին՝ արագ եւ խոր քննութիւն իրականացնելու եւ պատասխանատուները բերելու արդարադատութեան դաշտ:

Յունիսի 28-ին Երեւանի Նուպարաշէն համայնքի դատարանին մէջ ոստիկանութեան աշխատակիցը թոյլ չէ տուած մեղադրեալներին մէկուսել՝ Արեգ Կիւրեղեանին նամակ յանձնել իր փաստաբանին: Կիւրեղեան եւ միւս մեղադրեալները բողոքած են անոր դէմ, եւ վէճ սկսած է ոստիկաններու եւ մեղադրեալներու միջեւ:



# ԼՈՒՐԵՐ

## Ատրպեյձանի Ղեկավարութիւնը Կը Կրէ Իր Սադրանքներու Պատասխանատուութիւնը, Ըսած է Նալպանտեան



Էտուարդ Նալպանտեան Քիշնեւի մէջ կը մասնակցի Արեւելեան Ընկերակցութեան 9-րդ Նախարարական Ժողովին

«Քանի դեռ Ատրպեյձան չի կատարեր 1994-1995թթ. գինադադարի ետևողմ համաձայնագրերով ստանձնած իր միջազգային պարտաւորութիւնները, կը հրաժարի իրականացնել Վիեննայի եւ Սանկտ Փետրոսպոլի գագաթնաժողովներուն ձեռք բերուած համաձայնութիւնները, յատկապէս գինադադարի խախտումներու հետաքննութեան մեխանիզմի ստեղծման վերաբերեալ, որ կրնայ նաեւ կանխարգելման մեխանիզմ հանդիսանալ, ուրեմն նոյն ինք Ատրպեյձանի ղեկավարութիւնը կը կրէ իր սադրանքներու հետեւանքներու ողջ պատասխանատուութիւնը», - Քիշնեւի մէջ յայտարարած է Հայաստանի Արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանտեան:

«Կրկին Ատրպեյձանի ներկայացուցիչները, չարաչահելով այս հարթակը, օրակարգի թեմայի՝ Արեւելեան գործընկերութեան շրջանակներում համագործակցութեան մասին խօսելու փոխարէն հանդէս են գալիս սադրիչ յայտարարութիւններով», - լրագրողներու հետ զրոյցի ընթացքին յայտարարած է Հայաստանի Արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանտեան: Վերջինս Մոլտովայի մէջ կը մասնակցէր Արեւելեան գործընկերութեան Արտաքին գործոց նախարարներու ոչ պաշտօնական հան-

դիպման:

«Անվտանգութիւնը մեր տարածաշրջանին մէջ կը շարունակէ վտանգուած ըլլալ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան համապատկերին մէջ Ատրպեյձանէն մշտապէս հնչող ուժի կիրառման սպառնալիքներուն պատճառով: 2016 թուականի Ապրիլին Ատրպեյձան լայնածաւալ ներթափանցում սանձազերծեց Արցախի դէմ, որ ուղեկցուեցաւ միջազգային մարդասիրական իրաւունքի կոպտագոյն խախտումներով, քաղաքացիական բնակչութեան, ներառեալ երեխաներու, կիներու եւ ծերերու նկատմամբ իրականացուած վայրագութիւններով, զոհուածներու մարմիններու խոշտանգումներով, «Տահէշ»ի ոճով գլխատումներով:

Յուլիսի 4-ին Ատրպեյձանի ղեկավարութիւնը կրկին, տիրահաշակ անարեւելական կազմակերպութիւններու ոճով, ինչպէս շատ անգամ անկէ առաջ, իր ժողովուրդը որպէս կենդանի վահան օգտագործեց՝ Լեռնային Ղարաբաղը ծանր հրետանիով, ներառեալ «TR-107» համազարկային հրթիռային համակարգով ուժեղացնելու համար: Ի պատասխան, ԼՂ Պաշտպանութեան Բանակը ստիպուած էր ատրպեյձանական կողմի ներթափանցման գործողութիւններուն դէմ ինքնապաշտպանութեան դիմել:

## Եւրոպացի Խորհրդարանկաները Մտահոգ

Շարունակուած էջ 1-էն

հաւանաբար այս խումբի եւ համա-նախագահողներու գոյութիւնն է, որ կը կանխէ վատթարագոյնն ու իրավիճակի ալ աւելի սրումը: Կը կարծեմ, որ այդ մէկն ինքնին ձեռքբերում է, թէեւ, հաշուի առնելով վերջին լարուածութիւնը շփման գիծին վրայ, եղածը հաւանաբար բաւարար չէ», - արձանագրեց Շուպէլ:

Բարձրաստիճան դիւանագէտը Եւրոխորհրդարան եկած էր՝ ներկայացնելու այն համաձայնագրերը, որոնց շուրջ Պրիւքսէլ այժմ կը բանակցի պաշտօնական Երեւանի եւ Պաքուի հետ: Հայաստանի մասով բանակցութիւններն աւարտած են, կողմերն այժմ կը ստուգեն թարգմանութիւնները եւ եթէ ամէն ինչ ընթանայ ըստ ժամանակացուցի, փաստաթուղթը պիտի ստորագրուի արդէն յառաջիկայ Նոյեմբերին՝ Արեւելեան գործընկերութեան գագաթնաժողովին: Այս մասին յայտնած է Շուպէլ, ընդգծելով, որ ի տարբերութիւն

մինչեւ 2013 թուականը բանակցուած համաձայնագրին, նոր նախագիծին մէջ չկան ազատ առեւտուրին ու ներդրումներուն վերաբերող դրոյթներ:

«Այնչափ է, որ երկկողմ առեւտուրին վերաբերող մասն աւելի քիչ յաւակնոտ է, քան այն, ինչ մենք ունէինք նախկին փաստաթուղթին մէջ՝ Խոր եւ համապարփակ ազատ առեւտուրի համաձայնագրին մէջ, քանի որ Եւրասիական միութիւնը, որուն անդամակցած է Հայաստան, ունի որոշակի պահանջներ, որոնք համատեղելի չեն Եւրոմիութեան հետ: Խնդիրն այն է, որ ԵՏՄ անդամները չեն կրնար անկախ բանակցութիւններ վարել առեւտուրի համաձայնագրերու շուրջ, մինչդեռ Եւրոմիութեան Խոր եւ համապարփակ ազատ առեւտուրի համաձայնագիրը ստորագրած պետութիւնները կրնան ազատօրէն բանակցիլ երրորդ երկիրներու հետ», - ըսած է ԵՄ արտաքին գործոց նախարարութեան պաշտօնեան:

## Ղարաբաղի ՊԲ-ն Դիմել է Պատասխան Գործողութիւններու Ատրպեյձանական Հրթիռակոծումէն Ետք



Ղարաբաղի պաշտպանութեան բանակը երէկ հաղորդած է, որ տարբեր հատուածներու մէջ, ատրպեյձանական զինուած ուժերը կէսօրու ընդ սկսած են արկակոծել հայկական դիրքերը, իսկ արդէն երեկոյեան Ֆիզուլիի ուղղութեամբ գտնուող Ալիսանլու գիւղին մէջ տեղակայուած ռազմականէն TR-107 տիպի համազարկային հրթիռային կայանքներէ հրթիռակոծած են հայկական գործասերէն մէկու հրամանատարական կէտը: Վայրկեաններ անց, Պաշտպանութեան բանակը պատասխան գործողութիւններու անցած է եւ հարուածած է Ալիսանլու գիւղին մէջ գտնուող կրակակէտը: Ղարաբաղի ռազմական գերատեսչութիւնը պնդած է, որ ռազմական գործողութիւններու արդիւնքով հայկական կողմը

կորուստներ չունի, իսկ Ատրպեյձանական կողմը ունի կորուստներ:

Ատրպեյձանական լրատուամիջոցները 4 Յուլիսին, ուշ երեկոյեան հաղորդած էին, թէ հայկական կողմի արկակոծութեան հետեւանքով Ալիսանլու գիւղին մէջ 50-ամեայ կին եւ 2 տարեկան երեխայ զոհուած է, եւս մէկ կին վիրաւորուած եւ տեղափոխուած է հիւանդանոց:

Պաշտօնական Պաքուն պնդած է, որ հայկական կողմը առաջին անգամ կրակած է, Ղարաբաղի բանակն ալ հակառակը ապացուցելու համար տեսանիւթեր տարածած է:

Ատրպեյձանի պաշտպանութեան նախարարութիւնը պնդած է նաեւ, որ հայկական կողմը երեք վիրաւոր ունի, մինչդեռ Պաշտպանութեան բանակը կը հերքէ:

## Թուրքիոյ Խորհրդարանի Անդամները

Շարունակուած էջ 1-էն

Անոնց շարքին կայ նաեւ թուրք ժողովուրդի պատմութիւնն ու թուրքիա ապրող ժողովուրդներու ընդհանուր անցեալը վիրաւորելու եւ մեղադրանքներ ներկայացնելու պարագային պատժամիջոցներ կիրառելու դրոյթները:

Եւրոպացի պատգամաւորներէն շատեր լիչեցին, որ տարիներ առաջ ԵՄ արտաքին գործոց նախարարութիւնը նոյն ոգեւորութեամբ կը խօսէր Հայաստանի հետ բանակցուող Ընկերակցութեան համաձայնագրին մասին, որ, սակայն, այդպէս ալ չստորագրուեցաւ, քանի որ Երեւան անակնկալ կերպով որոշեց միանալ Մոսկուայի նախաձեռնած Եւրասիական տնտեսական դաշինքին: Ինչ երաշխիքներ կան, որ նոյնը պիտի չկրկնուի հիմա, հարց տուաւ գերմանացի պատգամաւոր Միխայիլ Կալ: Ի պատասխան՝ արտաքին գործոց նախարարութեան պաշտօնեան արձանագրեց՝ երաշխիքներ չկան, սակայն, ակնկալիքները մեծ են: Իսկ որքանով արդիւնաւէտ է

համագործակցիլը երկրի մը հետ, ուր օլիկարխիկ համակարգ հաստատուած է եւ առկայ է համատարած կաշառակերութիւն, նման հարց ուղղեց սպանացի պատգամաւոր Խաւիէր Նալթ:

«Այն, որ օլիկարխիներն են, որոնք կը տնօրինեն երկիրը, կը կարծեմ, որ նորութիւն չէ, այն յատուկ է ոչ միայն Հայաստանին: Օլիկարխներու ազդեցութիւնը նախկին Խորհրդային Միութեան երկիրներուն մէջ, անշուշտ, բաւական զգալի է, եւ ես կը կարծեմ, որ օրէնքի գերակայութեամբ, նոր համաձայնագրերով ու մեր օգնութեամբ այդ ազդեցութիւնը նոյնպէս պիտի կրճատուի», - արձագանգեց ԵՄ արտաքին գործոց նախարարութեան ներկայացուցիչը:

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
1060 North Allen Ave Pasadena, CA 91104  
Գրասենեակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով  
հեռաձայնել՝  
**(626) 398-0506**



# Մոսկուան Պարուէն կը Պահանջէ Դադրեցնել ՌԴ Հայազգի Քաղաքացիներու Հանդէպ Խտրական Վերաբերմունքը



Ռուսիա կը պահանջէ Ատրպէյճանի իշխանութիւններէն դադրեցնել Խտրական վերաբերմունքը այդ երկիր ժամանող այն Ռուսիոյ քաղաքացիներուն նկատմամբ, որոնք ունին հայկական ազգանուն, կը փոխանցէ ԹԱՍՍ-ը:

«Ստիպուած ենք հաստատելու, որ Ատրպէյճան ժամանող Ռուսիոյ քաղաքացիները, իսկապէս, Խտրականութեան կ'ենթարկուին էթնիկ հիմքի վրայ», - յայտարարած են Ռուսիոյ արտազին գործոց նախարարութենէն՝ կապուած շարք մը դէպքերու հետ:

«Կը շարունակենք պահանջել դադրեցնել այդ գաչարացիներու Խտրական գործելաոճը, որ չի համապատասխաներ երկու երկրի միջեւ բարեկամական յարաբերութիւններուն: Բնականաբար, եզրակացութիւններ պիտի ընենք ստեղծուած իրադրութենէն», - նշած են Ռուսական դիւանագիտական գերատեսչութիւնէն:

Ինչպէս յայտնած են Ռուսիոյ ԱԳ նախարարութենէն, այս տարուան սկիզբէն Ռուսաստանի 25 քաղաքացիի արգիլած են մուտք գործել Ատրպէյճան: Ձանոնք քանի մը ժամով սպասել տուած են, որոշ պարագաներու նոյնիսկ առանց ուտելիքի, ջուրի եւ բժշկական օգնութեան, այնուհետեւ իրենց իսկ հաշուին ետ ուղարկած են: Որպէս

պատճառաբանութիւն նշուած է անոնց հայկական ազգանունները, սակայն եղած են նաեւ դէպքեր, երբ «Ռուսական ազգանուններով, անուններով ու հայրանուններով անձեր հարցաքննած են հայկական նախնիներ ունենալու փաստը բացայայտելու նպատակով»:

Ռուսիոյ ԱԳՆ-էն յայտնած են, որ իրենք բազմաթիւն անգամներ, որոնց շարքին նաեւ պաշտօնական դիտողագիրներով պահանջած են դադրեցնել նման գործելաոճը, սակայն այդպէս ալ չեն ստացած բաւարարող պատասխան: «Ատրպէյճանի ԱԳՆ պատասխան դիտողագիրին մէջ կ'ըսուի, որ «անցանկալի իրադարձութիւնները կանխելու նպատակով Ատրպէյճան ստիպուած է կիրառելու համապատասխան կարգաւորումներ շարք մը անձերու նկատմամբ», - նշած են նախարարութենէն:

ՌԴ արտաքին գերատեսչութիւնը նաեւ ընդգծած է՝ յղուած բողոքներու մէջ «եւրկէտ ունեցած ենք նաեւ այն, որ Ատրպէյճանը իրեն կը ներկայացնէ իբրեւ ազգային եւ կրօնական հանդուրժողականութեան օրինակ, վերջին ժամանակներուն ալ յայտարարած է հայ-ատրպէյճանական հասարակական երկխօսութիւնը կարգաւորելու մտադրութեան մասին»:

## ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ Հրապարակեց

Շարունակուած էջ 1-էն

«Իշխանութիւններն ու քաղաքական ուժերը պէտք է բոլոր հնարաւոր ջանքերը գործադրեն ընտրութիւններու ազնուութեան նկատմամբ հասարակական վստահութիւնը ամրապնդելու համար, որոնց շարքին՝ հրապարակաւ մերժելով քուէներու առուվաճառքը եւ քայլեր ձեռնարկելով, որպէսզի ընտրողներու նկատմամբ ճշգրտման չգործադրուին որոշ ընտրական հանդիպումներու մասնակցելու կամ որեւէ յստակ ձեռով քուէարկելու համար», - շեշտուած է գեկոյցի քարոզարշաւին վերաբերող բաժնին մէջ:

Վերահաստատելով նախնական գեկոյցի ժամանակ իրենց հնչեցուցած դրական գնահատականներն այն մասին, որ խորհրդարանական ընտրութիւնները լաւ կազմակերպուած էին եւ ընդհանուր առմամբ պահպանուած էին հիմնարար ազատութիւնները, իսկ ընտրութիւններու օրը անցած է հանգիստ ու խաղաղ, օրուայ ընթացքին նշանակալի միջադէպեր չեն արձանագրուած, «ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ»ի դիտողական առաքելութիւնը, այ-

դուհանդերձ հաստատած է, որ միջազգային դիտողները լարուածութիւն եւ ընտրողներու ահաբեկման փորձեր նկատած են թէ՛ ընտրատեղամասերուն մէջ, թէ՛ անոնցմէ դուրս:

Ձեկոյցին մէջ ըսուած է նաեւ, որ «ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ»ի միջազգային դիտողներուն հետ գրոյցներու ժամանակ մտահոգութիւններ հնչեցուած են այն մասին, որ հասարակութիւնը դժկամութիւն կը ցուցաբերէ ընտրախախտումներու մասին ահազանգելու հարցին մէջ, որ կը բացատրուի բողոքներուն ընթացք տալու գործընթացի արդիւնաւէտութեան նկատմամբ անվստահութեամբ:

«Դատական համակարգի, ընտրութիւններու կազմակերպման եւ իրաւապահ համակարգի անկախութեան բացակայութիւնն ու բողոքներուն ընթացք տալու փորձը կասկածի տակ կը դնեն իրաւական ճանապարհով անոնց բաւարարման արդիւնաւէտութիւնը, բան մը, որ չի համապատասխաներ «ԵԱՀԿ»ի նկատմամբ երկրի ստանձնած պարտաւորութիւններուն եւ Եւրոպայի Խորհուրդի չափանիշներուն:

# Թուրքիոյ Ընդդիմութեան Բազմահազարնոց Հանրահաւարով

Թուրքիոյ ընդդիմադիր ժողովրդա-հանրապետական կուսակցութեան՝ 15 Յունիսին սկսած «Արդարութեան երթ»ը աւարտեցաւ Պոլսոյ մէջ տեղի ունեցած բազմահազարնոց հանրահաւարով:



Ընդդիմադիր կուսակցութեան համակիրներն ու ղեկավար Քեմալ Քըլըչտարօղլու «Արդարութիւն» գրութեամբ պատառներով 25 օրուան մէջ անցան Անգարայէն Պոլիս տանող շուրջ 450 քմ ճամբան:

«Ճումհուրիէթ» պարբերականի փոխանցմամբ, Պոլսոյ Մալթեփէ շրջանին մէջ տեղի ունեցած հանրահաւարին աւելի քան 2 միլիոն մարդ մասնակցած է:

Թրքական ընդդիմութեան առաջնորդ Քեմալ Քըլըչտարօղլու իր ելոյթի ընթացքին հանգամանօրէն ներկայացուցած է «Արդարութեան երթ» կազմակերպելու բոլոր շարժառիթները:

«Մենք քայլեցինք ճշուածներու իրաւունքներու, բանտարկուած պատգամաւորներու, ձերբակալուած լրագրողներու, համալսարաններէն վճարուած դասախօսներու համար», - յայտարարած է Քըլըչտարօղլու, նշելով երթի շարք մը այլ պատճառներ եւս:

Իրենց հասցէին հնչող քննադատութեան թէ՛ արդարութիւնը փողոցը չեն փնտռեր, Քըլըչտարօղլու հակադրած է՝ «Երկրի մը մէջ, ուր մեծ անհաւասարութիւն կայ, դատարանները անկախ չեն, խորհրդարանի լիազօրութիւն-

ները իւրացուած են, իսկ մամուլը՝ լռեցուած, պայքարի միակ վայրը փողոցն է»:

Ժողովրդա-հանրապետական կուսակցութեան ղեկավարը իրենց արդարութեան պահանջը ամփոփած է 10 կէտէ բաղկացած մանիֆեստով: Կէտերը կը վերաբերին անցած տարուայ 15 Յունիսի յեղաշրջման ձախողած փորձէն ետք երկրին մէջ տեղի ունեցած իրաւախատումներուն, ձերբակալութիւններուն, ժողովրդավարութեան սկզբունքներու ոտնահարման, խօսքի ազատութեան սահմանափակման, արտակարգ դրութեան պայմաններու մէջ իրականացուած սահմանադրական հանրաքուէի վիճելի արդիւնքներուն, իշխանութիւններու վարած արտաքին քաղաքականութեան:

«Այս պայքարը արդարութեան պայքար է: Այս երթը մեր երթն է: Մենք կանգ չենք առներ, քանի դեռ չեն կատարուած մեր բոլոր պահանջները: Արդարութեան երթի վերջին օրը նոր սկիզբ մըն է, առաջին քայլը», - յայտարարած է Քըլըչտարօղլու, նշելով, որ «Արդարութեան երթ»ը այսպիսով չ'աւարտիր:

## Գերմանիան իր Ուժերը կը Հեռացնէ Ինճիրլիքէն



Գերմանիոյ բանակին պատկանող ռազմական ինքնաթիռները սկսած են դուրս գալ Ինճիրլիք գինուորական խարխիւէն: «CNN-Turk»-ի համաձայն՝ թուրքիայէն Գերմանական ռազմական ուժերու տեղափոխման նախապատրաստական աշխատանքները սկսած էին թերեւս մէկ ամիս առաջ:

Կը նախատեսուի, որ բեռնատար օդանավներով իրականացուող տեղափոխումը կ'աւարտի երկու ամսուան ընթացքին: Իսկ Գերմանական «Tornado» ռազմական ինքնաթիռները դեռ որոշ ժամանակ կը մնան Ինճիրլիքի մէջ:

Ըստ աղբիւրին Գերմանական ուժերուն կարելու է մասը աւելի ուշ պիտի տեղափոխուին Յորդանան, երբ Ամմանի օդակայանին մէջ

կ'աւարտին համապատասխան նախապատրաստութիւնները:

Նշենք, որ «Իսլամական պետութիւն» (ԻՊ) ահաբեկչական խմբաւորումին դէմ ձեւաւորուած դաշինքի անդամ Գերմանիոյ ռազմական ուժերը Թուրքիա տեղակայուած էին 10 ղեկտեմբեր 2015-ին:

Յունիս 2016-ին Պոլստեթակի կողմէ Հայոց Յեղասպանութիւնը ճանջող բանաձեւի ընդունումէն ետք Թուրքիան արգիլեց գերմանացի պատգամաւորներուն՝ այցելել Ինճիրլիքի ռազմակայան: Աւելի ուշ գերմանական կողմը վճռեց Ատանայի մէջ գտնուող իր 260 գինուորականները եւ ռազմական ինքնաթիռները տեղափոխել Յորդանան:



### Ռիչըրտ Կիրակոսեան - Միջնորդները Ատրպեյձանի Վրայ Ազդելու Լծակ Չունին



«ՆԱԹՕ-ն վարչապետին Պրիլբուխի մարդկային անվտանգութեան եւ անվտանգութեան ոլորտի բարեփոխումները Հայաստանի մէջ» թեմայով Համաշխարհայնացման եւ տարածաշրջանային համագործակցութեան վերլուծական կենդրոնի երէկուայ հրաւիրած սեմինարի ժամանակ «Տարածաշրջանային հետազոտութիւններու կեդրոն»ի ղեկավար Ռիչըրտ Կիրակոսեան նշած է, որ Լեռնային Ղարաբաղի շուրջ կ'աւելնան սպառնալիքները, եւ որ Հայաստանի անվտանգութիւնը կը ստիպէ համագործակցել ՆԱԹՕ-ի հետ: Ռիչըրտ Կիրակոսեան ըսած է, որ ՀՀ-ՆԱԹՕ յարաբերութիւններուն մէջ կարեւոր է թէ ինչպէս Հայաստանը բարեփոխումներ կ'իրականացնէ: Քաղաքագէտը յայտնած է նաեւ, որ, ի տարբերութիւն իր հարեւաններուն, Հայաստանը աւելի կանխատեսելի զինուժ կ'առաջարկէ: Նշելով, որ ՆԱԹՕ-ն շատ կարեւոր է Հայաստանի համար, Ռիչըրտ Կիրակոսեան ըսած է. «Մենք սպառազինութիւնը կը ստանանք ՌԴ-էն, իսկ արժէքները՝ Արեւմուտքէն»:

Ռիչըրտ Կիրակոսեանին հարց տրուած է, թէ ինչ քայլեր պէտք է ընէ Հայաստանը Ատրպեյձանի հետ յարաբերութիւններուն մէջ, որպէսզի վերջինս դադարեցնէ ռազմական գործողութիւնները: «Մենք ոչինչ ալ պէտք չէ ընենք: Այն, ինչ կատարուեցաւ երէկ գիշեր, հայաստրպեյձանական սահմանին, անցեալ տարուայ ապրիլեան պատերազմէն ետք ամենալուրջ հար-

ուածներէն էր: Եւ այս ծիրէն ներս մենք կը տեսնենք, որ Հայաստանը ոչ մէկ գործընկեր չունի խաղաղութեան հասնելու հարցին մէջ: Այլ բառերով ըսած՝ Հայաստանը հակուած է խաղաղութեան գործընթացի, իսկ Ատրպեյձանը՝ ոչ», - ըսած է քաղաքագէտը:

Դիտարկման, որ միջազգային կազմակերպութիւնները միշտ հաւասարութեան նշան կը դնեն Ատրպեյձանի եւ Հայաստանի միջեւ, քաղաքագէտը արձագանգեց. «Համաձայն չեմ, ԵԱՀԿ Մինսքի խումբը կ'ընէ այն, ինչ կրնայ: Այն աւելի շատ բախուող կողմերու պարտականութիւնն է: Բայց ճիշդ էք, որ երկար ժամանակ է կայ այն ընկալումը, որ Ատրպեյձանին չեն ստիպել ընել այն, ինչ ան պարտաւոր է ընել»:

«Իսկ կու գա՞ն պահ, որ Ատրպեյձանին կը ստիպեն կատարել Վիեննայի եւ Ս. Փեթերսպուրկի մէջ ձեռք բերուած պայմանաւորութիւնները», - հարցուցած են Ռիչըրտ Կիրակոսեանին: «Հասկնալի է, որ Ատրպեյձանը չի կատարել իր նախկին խոստումները: Բայց խնդիրը այն է, որ միջնորդները չունին լծակներ՝ ստիպելու Ատրպեյձանին կատարելու իր պարտաւորութիւնները: Օրինակ, Ատրպեյձանը ստիպեց փակել ԵԱՀԿ երեւանեան գրասենեակը: Եւ այդ մէկը վիրաւորանք է ոչ միայն ԵԱՀԿ-ի հանդէպ, այլեւ Ռուսաստանի մէջ միշտ ղեկավարուած է ՌԴ-ի կողմէն», - ըսած է «Ազատութեան» գրուցակիցը:

### Ֆրանսահայ Գաղութն ու Նորընտիր Երեք Յայ Երեսփոխանները



Անցնող Յունիս ամսուան ընթացքին աւելի քան կէս միլիոն հաշուող ֆրանսահայ համայնքի պատմութեան մէջ նոր էջ մը բացուեցաւ:

Արդարեւ Ֆրանսայի նախագահ էմմանուէլ Մաքրոնի ղեկավարած «Յառաջ Հանրապետութիւն» կուսակցութենէն Ազգային Ժողովէն ներս երեք ֆրանսահայերու մուտքը բացառիկ երեւոյթ մը նկատուեցաւ: Նորընտիր երեսփոխաններն են Ժագ Մարիլիոսեան, Տանիելա Ղազարեան, Կիլյոմ Եսայեան, ինչպէս նաեւ Նատիա Եսայեան, որուն ամուսինը հայ է:

Ըստ փորձագէտներու նորընտիր նախագահի որդեգրած քաղաքականութեամբ Ֆրանսայի մէջ տեղի կ'ունենայ փափուկ յեղափոխութիւն: Քաղաքական ասպարէզ կը նետուին այնպիսի անձնաւորութիւններ, որոնք գործունեայ են ուսանողներ, փաստաբաններ, ձեռնարկութիւններու տնօրէններ եւ այլն:

Այս օրերուն քննարկուեցան նաեւ այն հարցերը թէ ընտրուած հայ երեսփոխաններու գործունէութեամբ, արդեօք ֆրանսահայ համայնքին առջեւ դրուած խնդիրները եւ ֆրանսական խորհրդարանին մէջ հայկական հարցերը արագ լուծում պիտի կարենա՞ն ստանալ, թէ ոչ:

Որոշ տեսաբաններ այն կարծիքը յայտնած են, որ ամէն պարագայի պէտք չէ մոռնալ որ անոնք նախ եւ առաջ Ֆրանսայի երեսփոխաններ են, ուստի նուազ հաւանական նկատած են որ այդ գործիչները ֆրանսահայ համայնքի խնդիրներու լուծման կրնան նպաստել: Անոնք կը նշեն թէ համայնքին առջեւ ի վերջոյ մեծ խնդիրներ չկան: Իսկ հայութեան հետ առնչուող քաղաքական հարցերը երկրի խորհրդարանին մէջ քննարկուած են նոյնիսկ այն ժամանակ երբ Ֆրանսայի խորհրդարանին շէջ հայագրի երեսփոխաններ չեն եղած: Նշեք նաեւ որ Ֆրանսայի խորհրդարանին մէջ ժամանակին, ակնառու գործունէութիւն ծաւալած է նշանաւոր քաղաքական գործիչ Փաթ-

րիք Տէվէճեան, որ այժմ Օ Տը Սէն գաւառի խորհուրդի նախագահն է:

Ֆրանսայի նախագահ Մաքրոնի հայութեան հանդէպ իր վերաբերմունքին գալով ան տակաւին Ապրիլ ամսուան մէջ Փարիզի Կոմիտայի յուշարձանին մօտ, յարգանքի տուրք մատուցած է Եղեռնի զոհերու յիշատակին: Այս առթիւ ան ըսած է. «Ահա թէ ինչու ես այստեղ եմ: Շատ կարեւոր է պահպանել մեր պատմութիւնը: Այո, այդ մէկը նաեւ Ֆրանսայի պատմութեան մէկ մասն է, քանի որ հայերը մեծ ներդրում ունեցած են մեր պատմութեան կայացման գործին: Ես գիտեմ բոլոր այն կարեւոր հարցեր, որոնցմէ մի քանի նմինչեւ այսօր չեն լուծուած: Եւ եթէ տասը հինգ օր անց ֆրանսացիներն իրենց քուէն տան ինծի, ապա ես Ֆրանսայի մէջ բնակող հայերուն հետ կ'երթամ մինչեւ վերջ: Այսինքն մինչեւ Եղեռնի միջազգային ճանաչում»:

Իսկ Ղարաբաղեան հիմնահարցի լուծման կապակցութեամբ Մաքրոնի ըսած է. «Եթէ դառնամ ֆրանսայի նախագահ, ապա առաւելագոյն ջանքեր կը գործադրեմ դարաբաղեան հակամարտութիւնը լիովին կարգաւորելու գործին մէջ: Այսօր ես մանրամասնօրէն չեմ խօսիր, սակայն այն փաստը որ ես այստեղ եմ կը վկայէ որ ես մինչեւ վերջ ձեր կողքին կ'ըլլամ: Ամէն ինչ կ'ընեմ սակայն դուք ալ կը հասկնաք, որ Ֆրանսան առանձին չի կրնար լուծել խնդիրը», ըսած է ան:

Հայերու պատմութիւնը նաեւ Ֆրանսայի պատմութեան մէկ մասն է ըսելով էմմանուէլ Մաքրոն նկատի ունեցած է այն հարուստ անցեալը որ հայերը կերտած են եւ այսօր ալ պատմութիւն կը կերտեն Ֆրանսայի մէջ:

Ներկայիս հայ-ֆրանսական յարաբերութիւնները կը թեւակոխեն նոր փուլ: Իսկ ֆրանսական խորհրդարանին մէջ հայ երեսփոխաններու առկայութիւնը միայն դրական անդրադարձ կ'ունենայ հայ ֆրանսական հին ու նոր կապերուն վրայ:

[www.massisweekly.com](http://www.massisweekly.com)

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909

**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
*More locations and more ways to service your insurance and financial needs*

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> <li>• Life Insurance</li> <li>• Health Insurance</li> <li>• Group &amp; Individual</li> <li>• Long Term Care</li> <li>• Disability</li> </ul>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> <li>• Estate Planning</li> <li>• Will &amp; Living Trust</li> <li>• Full Annual Review</li> <li>• Mortgage Protection</li> <li>• College Planning</li> </ul>	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> <li>• Workman's Compensation</li> <li>• Employee Benefits</li> <li>• Annuity</li> <li>• IRA</li> <li>• 401K &amp; 403B</li> </ul>
--	---	---

**A.B.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
**Ապահովագրութիւնը Անհրաժեշտ է**

*Coverage & Protection should be on the top of your priority list.*

**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits



### ԿԱԶՄՈՒԱԾ Է ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՁԵՆՈՂ ՄԱՐՄԻՆ

4 Յուլիսին Պոլսոյ հայոց պատրիարքարանէն ներս ժողով գումարուած է, որուն ընթացքին ընտրուած է պատրիարքի ընտրութիւնը կազմակերպող նախաձեռնարկ մարմնի կազմը:

«Ակոս» շաբաթաթերթի տեղեկացմամբ՝ նախաձեռնարկ մարմնի ընտրութեամբ պաշտօնապէս սկսած է պատրիարքի ընտրութեան գործընթացը:



Ժողովին, որու ընթացքին ընտրուած է նախաձեռնարկ մարմինը, մասնակցած են հայ համայնքի հիմնադրամներու վարիչները եւ պատրիարքութեան հոգեւոր խորհուրդի անդամները: Նախաձեռնարկ մարմնի ընտրուած անդամները 17-ն են, որոնցմէ 4-ը պահեստային են, 13-ը՝ հիմնական:

Նախաձեռնարկ մարմնի հիմնական անդամներն են՝ Սարուէն Սերթշիմշէք (32 ձայն), Խորոզի Գէօրգիսի թողլու (29 ձայն), Վարուժան Պուլկան (28 ձայն), Թա-

մար Քարասու (25 ձայն), Խաչիկ Ճանել (24 ձայն), Սարգիս Չաւուշեան (24 ձայն), Սեդրակ Տաւուսեան (23 ձայն), Նազարէթ Օզասահեան (23 ձայն), Սեպուհ Ասլանկիլ (22 ձայն), Անդրանիկ Քէօսետաք (21 ձայն), Սեւան Չաւուշեան (21 ձայն), Սարգիս Քիւլեկէշ (20 ձայն), Մկրտիչ Սերթշիմշէք (20 ձայն): Պահեստային անդամներն են՝ Կարպիս Տուրասլան (19 ձայն), Եղեսիա Թըրթըր (19 ձայն), Արման Աթընըզ (18 ձայն), Դաւիթ Տամլա (17 ձայն):

### ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԷՋ ԿԱՅԱՑԱԾ Է «ԻՄ ՍՓՈՒՒԱԾ ՄԵԾ ԸՆՏԱՆԻՔ»

### ՎԱԵՐԱԳՐԱԿԱՆ ԺԱՊԱԷՆԻՆ ՇՆՈՐՀԱՅԱՆԴԵՍ

«Վալլեքա կարտըն Սինեմա» շարժանկարի դահլիճին մէջ տեղի ունեցած է «Իմ Սփուած Մեծ Ընտանիք» վաւերագրական շարժանկարին շնորհահանդէսը:



Շարժանկարը կը պատմէ «Արմենիա» առաջատանաւի ճամբորդութեան ընթացքին Զօրի Պալայեանի՝ տարբեր երկիրներու հայկական համայնքներ կատարած այցելուութիւններու մասին:



Շարժանկարի բեմադրիչ եւ բնագրի հեղինակ Աննա Դերձակեան ըսած է, որ «Արմենիա» առաջատանաւի ճամբորդութեան մասին պատմող շարժանկարը երկրորդն է: «Արմենիա» առաջատանաւը անցած է 80.000 քմ: «Մերոպ Մաշտոց» գիտարշաւը տեւած է 2 տարի (2009-2011 թուականներ): Գիտարշաւը նաւարկութեան ընթացքին այցելած է 10 հայ համայնք, շուրջ 25 եկեղեցի եւ 25 հայկական կրթօճախ: Պատմութեան մէջ առաջին անգամ հայկական առաջատանաւը անցած է Փանամայի ջրանցքով, հաստած է հասարակածը, շրջանցած է Հորն հրուանդանը: Գիտարշաւը Հորն կղզիին մէջ տեղադրած է հայկական խաչ, Զատիկի կղզիին եւ Փորթօ Ուիլիքսի մէջ՝ տարածութիւն նշող ցուցանակներ, Եւա կղզիին մէջ յայտնաբերած է հայկական եկեղեցի, մանրամասնած է շարժանկարին բեմադրիչը եւ աւելցուցած, նիւթերը բաւական շատ էին: Այս շարժանկարին մէջ ներկայացուցած ենք Սփիւռքի այն վայրերը, ուրկէ «Արմենիա» առաջատանաւով անցած են «Մերոպ

Մաշտոց» գիտարշաւի մասնակիցները: Շարժանկարին մէջ անդրադարձած ենք այնտեղ ապրող մեր հայրենակիցներուն, հայկական մշակութային կեդրոններուն, կրթօճախներուն: Շարժանկարին վերնագիրը կը պատմէ մեր՝ հայերու մեծ ընտանիքին մասին, անոնց մասին, որոնք կ'ապրին աշխարհի տարբեր վայրերու մէջ, բայց հոգիով, սրտով, գաղափարով մէկ են՝ միաւորուած»:

Զօրի Պալայեան, իր հերթին, իր խօսքին մէջ ընդգծած է, որ աշխարհի 5 մայրցամաքներուն վրայ հայկական համայնքի ներկայացուցիչները մեծ սիրով ու ջերմութեամբ ընդունած են իրենց՝ «Մերոպ Մաշտոց» գիտարշաւի անձնակազմը:

Շարժանկարի վաւերագրող Սամուէլ Պատասեան, որ ամբողջ շրջագայութեան ժամանակ եղած է առաջատանաւին վրայ, ըսած է. «Ծովուն մէջ մեծ ուժ կը ծախսէինք. բացի նկարելէն, կ'աշխատէինք անձնակազմին հետ՝ կը ձգտէինք որեւէ բան չփախցնել: Շրջագայութեան ընթացքին մենք հանդիպած ենք յայտնի, տաղանդաւոր

### ՄԿՐՏԻՉ ՄԱՐԿՈՍԵԱՆԻ «ՄԵՐ ԱՅՂ ԿՈՂՄԵՐԸ» ԳԻՐԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՎ



Մարկոսեան Տիգրանակերտը կը յայտնաբերէ այնպէս ինչպէս որ ան կար իր մանկութեան շրջանին:

ման համագումարներ կայացան Երեւանի մէջ, եւ հիմա, երկու տարին անգամ մը կը շարունակուին փոխնիփոխ Հայաստանի եւ Սփիւռքի մէջ:

12-րդ համագումարի կազմակերպողներն էին՝ 1) PLAS - Լատին Ամերիկայի առողջապահութեան հայ արհեստավարներ: 2) FUNCEI - Ստամպուլեան Հիմնարկ: 3) FIDEC - Անշահաբեր կազմակերպութիւն, հաստատուած ԱՄՆ-ի մէջ, 4) AMIC:

Համագումարի նախագահն էր արժանթինահայ մեծանուն բժիշկ Տոքթ. Տանիէլ Ստամպուլեան, որ կատարեց բացման խօսքը եւ բարի գալուստ մաղթեց բոլորին: Մասնակից հիւրերն ու պատգամախօսներն էին՝ Հրանուշ Յակոբեան (Սփիւռքի նախարարուհի), որ շեշտը դրաւ հաւատքի, յոյսի, սիրոյ վրայ, Սերգէյ Սաչատրեան (Հաստատանի Առողջապահութեան նախարարի տեղակալ), ձէրի Մանուկեան (AMIC-ի նախկին ատենապետ), Յակոբ Գրքեաշարեան (առաջին համագումարի նախագահ), Վարդան Թաշճեան (առաջին համագումարի հիմնադիր), Վիգէն Սեփիլեան (AMIC-ի ներկայ ատենապետ) եւ Գիսակ Արք. Մուրատեան (Արժանթինի եւ Զիլիի հայոց առաջնորդ), որուն յաջողութեան մաղթանքով եւ աղօթքով ամբողջացաւ բացման արարողութիւնը:

Խ. ՃԱՆՈՅԵԱՆ- Ինչպէ՞ս էր ընդունելութիւնը:

ՏՈՔԹ. ԹԱՇՃԵԱՆ- Ազնիւ ու

ջերմ, թէ՛ պետական եւ թէ՛ ոչպետական առումներով: Արժանթինի պետութիւնը կը ներկայացնէր Առողջապահութեան նախարար Lemos Jorge եւ Պուէրթո Այրէսի քաղաքապետ՝ Larreta Horacio:

Խ. ՃԱՆՈՅԵԱՆ- Քանի՞ ժամ անսակցի համագումարին եւ ի՞նչ էին արժանթինացի հարցերը:

ՏՈՔԹ. ԹԱՇՃԵԱՆ- Հակիրճ գնահատումով ըսեմ, որ 660 արձանագրուածներ կային: Եղան 100-110 զեկոյցողներ, շուրջ 50-ը՝ Լատին Ամերիկայէն, գլխաւորաբար Արժանթինէն: 10-ը՝ Հայաստանէն, 20-ը՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներէն, որոնցմէ 10-ն՝ Գալիֆորնիայէն, իսկ մնացեալները՝ եւրոպական երկիրներէ՝ Անգլիա, Ֆրանսա, Հոլանտա եւ այլն: Համագումարը ընթացաւ երեք լեզուներով - սպաներէն, անգլերէն եւ հայերէն:

Առաջին օրուան հարցերն էին՝ ա) Հայաստանի եւ Արցախի ներկայ առողջապահական վիճակը, ինչպէս նաեւ առողջապահութեան կրթական վիճակը: Բ) Ուռուցքաբանութիւն/քաղցկեղ (Oncology): Գ) Ակնաբուժութիւն (Ophthalmology): Նոյն գիշերը, Հիլթոն պանդոկի Աթլանթիք սրահին մէջ տեղի ունեցաւ բարի գալուստի հիւրասիրութիւն մը հոծ բազմութեամբ, ճոխ ճաշկերոյթով եւ կենացի բազմազան ըմպելիքով: Գործադրուեցաւ զեկոյցի յայտագիր մը, որուն ընթացքին արժանթինացի հայ երգչուհին, որ հայաստանի մէջ ստացած էր իր երաժշտական կրթութիւնը, հայ երգը տարածելու նպատակով: Ան հոյակապ ելոյթ ունեցաւ այդ գիշեր: Յիշեմ նաեւ, որ սրահէն ներս անակնկալօրէն ներկայ էր նաեւ Հայաստանի մօտ Արժանթինի ղեկավար՝ Gonzalo Urriolabena:

Այս առթիւ, Տոքթ. Տանիէլ Ստամպուլեան մի քանի անձեր արձանթինացի փոխով պարգեւատրելի էր, նոյն ձեւով պարգեւատրեց նաեւ պարոն ղեկավար, որ շնորհակալութիւն յայտնելով ըսաւ, թէ Երեւանի մէջ շատ հայ բարեկամներ ունի եւ ինքզինք հայ կը զգայ: Ապա Տոքթ. Ստամպուլեան զիս ալ հրաւիրեց բեմ եւ պարգեւատրեց:

Շնորհակալութիւն յայտնելէ ետք, Գալիֆորնիոյ մէջ մեքսիկացի հիւանդներէս սորված սպասներէնով սկսաւ խօսիլ... «Senior ambassador, somos todos humanos, somos todos argentinos, somos todos armenios, (վսեմաշուք ղեկավար, բոլորս մարդկային էակներ ենք, բոլորս արժանթինացի ենք, բոլորս հայ ենք): Եւ աւելցուցի. «Կանք, պիտի լինենք ու դեռ շատանաք եւ այսպիսի եւ աւելի յաջող ժողովներ պիտի կազմակերպենք: Կեցցէ՛ Արժանթին, կեցցէ՛ Հայաստան, կեցցէ՛ հայութիւն»:

Ժողովը հեղափոխ կերպով շարունակուեցաւ յաջորդ երկու օրերու ընթացքին, մանրակրկիտօրէն պատրաստուած յայտագրով: Առողջապահութեան զանազան բնագաւառները ներկայացուեցան հետեւեալ կարգով՝ Կնոջաբանութիւն (gynecology), սրտբանութիւն (cardiology), արիւնաբանութիւն (hematology), ատամնաբուժութեան եւ դեղագործութեան գիտութիւններ, հոգեւոր-մտային առողջութիւն, բուժքույրական աշխատանիստեր, մանկաբուժութիւն (pediatrics), մորթաբանութիւն (dermatology) 5 զերգայնութիւն (allergy), ծերունաբանութիւն (gerontology), ինչպէ՞ս բարելաւել Հայաստանի եւ Արցախի առողջապահական խնամքը, պատկերով ախտաճանաչում (diagnostic imaging), հեռա-բժշկութիւն (telemedicine), վարակիչ հիւանդութիւններ, ներքին հիւանդութիւններ, գեղձային հիւանդութիւններ (endocrinology), սննդաբանութիւն (nutrition), շաքարախտ (diabetes), սփորտային բժշկութիւն (sports medicine), ոսկրախտ (osteoporosis):

Խ. ՃԱՆՈՅԵԱՆ- Ի՞նչ էր նպատակը այս համագումարին:

ՏՈՔԹ. ԹԱՇՃԵԱՆ- Նպատակը, առողջութեան պահպանումը եւ բարելաւումը, ինչպէս նաեւ հիւանդութիւններու կանխարգիւլումն ու բուժումը լայնօրէն նկատի առնուեցան «առողջութիւն նորարարելու, ամբողջացնելու եւ յաջողացնելու մարտահրաւէրը» լողունգով: Այս բոլորը նորագոյն գիտա-

Շար.ը էջ 19

SABAH GUL CHAPTER INVITES YOU TO JOIN & TO ENJOY

# Stars By Night

## FISH and More

(Catch of the Day)

THE EVENT OF THE YEAR

Will Take Place on:

**Saturday, AUGUST 19, 2017**  
STARTING @ 7:30 PM

ADDRESS:  
9537 SHOSHONE AVENUE  
NORTHRIDGE, CA 91325

DJ MUSIC - Fish and More  
Entrance Donation \$35

**Մապահ Կիւ Մասնաճիւղը Կը Հրաւիրէ**

**Չուկ Կերոյթի Երեկոյ**  
Տեղի կ'ունենայ Գարաթ, 19 ՕԳՈՍՏՈՍ, 2017  
Երեկոյեան ժամը 7:30-էն սկսեալ  
Մուտքի նուէր՝ \$35



# ՉԻԼԻԵՆ ՅԱՅՐԵՆԻ ԿԱՐՕՏ. «ՅԱՅԱՍՏԱՆԸ ԻՆԾԻ ՅԱՄԱՐ ՏՈՒՆ Է»



## ԴՈՎՏ. ԳՐԱՅՐ ԵՒՊԵՏԵԱՆ

Նելսոն ֆալոյեանը ծնած է Սանթիագո, Չիլի: Ան երկրաչափ է եւ մասնագիտացած՝ համակարգիչներու մէջ: Ան Յեղասպանութենէ ճողողարած երրորդ սերունդի հայ է: Կը խօսի եւ կը կարդայ հայերէն եւ ստացած է հայեցի դաստիարակութիւն՝ իր հայ ծնողքէն: Նելսոն իր մասնագիտութեան կողքին նաեւ հետեւած է երաժշտութեան եւ այսօր իր կարեւոր բաժինը կը բերէ Սանթիագոյի հայկական մշակութային կեանքին մէջ: Կազմած է երգչախումբ մը՝ հայկական գաղութին անդամներէն, բոլորն ալ՝ սիրողական եւ կոչած է գայն՝ «Ծիծեռնակ», եւ թերեւս կը փորձէ ծիծեռնակին շինած բոցին նման՝ հեռաւոր Սանթիագոյի մէջ շինել իր հայկական բոցը:

Բայց Նելսոն «հարստացուցած» է իր կեանքը, եւ այս հարստութիւնը անպայմանօրէն նիւթական է: Ան կոչուած զգացած է պայմանաւորուելով Երեւանի ամերիկեան համալսարանին հետ եւ տարին քանի մը անգամ կը մեկնի Հայաստան՝ դասախօսելու: Եւ ինչպէս ինք ըսաւ, «Երբ որ Հայաստան սկսայ երթալ, աւելի լաւ սորվեցայ հայերէն, հիմա ինծի համար աւելի դիւրին է արեւելահայերէն խօսիլը»:

10 Յունիս 2017: Նելսոն բարի գտնուեցաւ՝ իր տան մէջ հիւրընկալելու զիս, երբ աշխատանքային այցելութեամբ դարձեալ կը գտնուէի Սանթիագո: Բայց կար նաեւ աւելին: Ան նաեւ հրաւիրած էր իր «Ծիծեռնակ» երգչախումբին կարգ մը անդամները, որոնք վերջերս Հայաստան այցելած էին եւ վերադարձած՝ մեծ ոգեւորութեամբ: Եթէ մէկ կողմէ պիտի վայելէի Սանթիագոյի «Ծիծեռնակ»-ի անդամները, բայց նաեւ՝ անոնց հայրենի կարօտի վկայութիւնները...

Հեռաւոր Սանթիագոյի մէջ հայկական այս փոքրիկ «բոցը» կը դիտէի: «Լման» հայ՝ հայ ծնողներուն ժառանգութիւնը, «կէս» հայ՝ խառնածին ամուսնութիւններու արդիւնք, եւ տակաւին՝ «քառօր»:  
Խառն ամուսնութիւններու յաջորդականութիւն: Իսկ այս բոլորը հետեւանքն են Հայոց ցեղասպանութեան, որուն պատճառով հայը տեղահան եղաւ իր բնօրրանէն եւ տարածուեցաւ աշխարհով մէկ: Այս բոլորին վկայութիւնը Նելսոնին մեծ ծնողներն են, որոնց նկարները իր տան հիւրասենեակի պատին վրայ գեւեղուած՝ կը խօսին այդ ապրուած կեանքին մասին, անոնք Յեղասպանութենէ ճողողարած՝ հա-

սած էին Սանթիագո:  
«Յեղասպանութիւնը իմ ընտանիքիս պատմութիւնն է, իմ պատմութիւնն է: Իմ ժողովուրդիս պատմութիւնն է»:  
Նելսոնն է խօսողը: «Ասիկա շատ անձնական բան մըն է ինծի համար», շարունակեց ան:

Նելսոն ամուսնացած է Անտրէի հետ, որ տեղացի է: Ունին երկու զաւակներ՝ Մարալ եւ Գէորգ: Անտրէի համար յստակ էր հայկականութեան կարեւորութիւնը, երբ ամուսնացած էր Նելսոնին հետ: «Հայկական ընտանիքի մէջ մտած էի եւ հիմա անոր մէկ անդամն եմ», ըսաւ ան: Անտրէ Նելսոնին հետ քանի մը անգամ այցելած է Հայաստան, ապրած է հայրենիքի գեղեցկութիւնը եւ ջերմութիւնը: «Փարիզը գեղեցիկ է, բայց Երեւանը աւելի դիւր կու գայ ինծի», ըսաւ ան:

Էմիլիա Ալմարզա Նազար՝ հայրը, տեղացի է, իսկ մայրը՝ հայ: Այսպէս ըսած ան՝ «կէս» հայ է, բայց Հայաստանէն վերադարձին ան արդէն «լման» հայն է եւ աւելին: «Առաջին իսկ օրէն զգացի, որ Հայաստանի հողը զիս գրկեց», ըսաւ Էմիլիան: Ան շատ բան ունէր պատմելու եւ կը փորձէր չմոռնալ իր ըսելիքները: «Շատ հպարտ զգացի, որ հայ էի, երբ Հայաստան կը գտնուէի», ըսաւ Էմիլիան: «Ուզեցի Հայաստանէն ամէն ինչ հետս բերել»: Էմիլիան հեւքի մը մէջ էր՝ հայրենիքին եւ անոր ջերմութեան հեւքը: «Ո՛չ միայն արիւնը կը կապէ եղեր, բայց նաեւ՝ հողը: Եւ զգացի հողին զօրութիւնը»:

Էմիլիան սկսած էր հայերէն սորվիլ եւ Հայաստանէն վերադարձին՝ որոշած է աւելիով զարկ տալ հայերէն սորվելու: «Կ'ուզեմ երթալ եւ Հայաստան ապրիլ», ըսաւ ան:

Էմիլիային աչքերուն մէջ ակներեւ էր հայուն՝ իր վերագտած հպարտութիւնը: «Երբ մէկը ինծի հարցնէ այսօր, թէ ուրկէ՞ ես, կ'ըսեմ իրենց՝ Չիլիէն, բայց հայ եմ»: Ան այսօր հայը եւ Հայաստանը կ'ապրի Սանթիագոյի մէջ: «Երբ Սանթիագոյի լեռներուն կը նայիմ, Արարատը կը տեսնեմ»:

Մարիա Թերեզան Էմիլիային քոյրն է: Առաջին անգամ էր, որ Հայաստան կ'այցելէր: «Զգացի, որ շուրջս ամէն մարդ հայ էր, եւ շատ արագ բոլոր հայերը իմ ընտանիքս դարձան»: Մարիան կը փորձէր ներկայացնել իր ապրած հայրենի հողին ջերմութիւնը: «Բայց նաեւ զգացի, որ ես շատ աւելի հայ էի, քան ինչ որ կը կարծէի»:

Շաբէ Զիքիի ծնողքը Պոլիսէն հաստատուած են Սանթիագո: Ան ծնած է Չիլի: Քիչ-քիչ կը խօսի

հայերէն: «Շատ զգացական էր Հայաստանը: Զգացի, որ ես Հայաստանն եմ, եւ թէ՛ ես հայ եմ», ըսաւ Շաբէն: «Գեղեցիկ է Երեւանը եւ չունի բարդութիւններ: Արուեստը եւ երաժշտութիւնը զիս շատ կապեցին քաղաքին եւ շատ անգամ լացի...»: Եւ չուշացաւ Շաբէին վճռականութիւնը: «Պէտք է աւելի շատ բան սորվիմ մեր՝ հայոց պատմութեան մասին»:  
Խուսիս մէջ էին Վիսենթէն,

րեցայ Յեղասպանութեան ահաւորութիւնը», Քրիսթոպալն է խօսողը: Ան հետը տարած է ծառի հունտ եւ ցանած է Հայաստանի մէջ: «Վերապրելու եւ նոր կեանքի նշան է», ըսաւ ան:

Վիսենթէն կրցած էր զգալ այն, որ լսած է իր մեծ-մեծ մօր տեղահանութեան կեանքի պատմութեան մասին: «Յեղասպանութեան թանգարանին մէջ մանուկներու նկարները տեսնելով՝ կրցայ



Քրիսթոպալը եւ Մարիան: Երեք երիտասարդներ, այսպէս ըսած՝ «քառօր» հայեր, որոնք այցելած էին Հայաստան: Երեքն ալ՝ համալսարանական ուսանողներ, բայց նաեւ երաժշտասէրներ եւ «Ծիծեռնակ»-ի խումբի անդամ՝ իբրեւ երգող ու նուագող:

Երեքն ալ այցելած էին Ծիծեռնակաբերդ եւ Յեղասպանութեան թանգարանը:

«Ծիծեռնակաբերդի մէջ ապ-

ապրիլ իմ մեծ-մեծ մօրս դժբախտ կեանքը», ըսաւ ան:

Մարիանին համար Հայաստանի «տուֆ» քարերը ինքնութեան նշան դարձած էր: «Զգացի, թէ այն արիւնը, որ հայկական է իմ մէջս, որ ինչքան կապեց զիս Հայաստանին»: Բայց Մարիան տակաւին ունէր պատմելիք: «Ծիծեռնակաբերդի մէջ տեսայ մէկ

Շար.ը էջ 19

## JENNY'S IMMIGRATION & SOCIAL SERVICES

**Հաստատութեան տնօրէն եւ հայ համայնքին տարիներ շարունակ օգնութիւն ցուցաբերած փորձառու ճենի Աբրահամեանը շարունակուած է օգտակար լինել մեր հայրենակիցներին կառավարութեան կողմից գաղթականութեան փաստաթղթերի, հիւանդութեան, թոշակների եւ պետական օգնութեան ձեւակերպման անհրաժեշտ ծառայութիւններով:**


### Քաղաքացիութեան Կեդրոն

1436 W. Glenoaks Blvd., Glendale, CA 91201  
Tel: (818) 242-8196 Fax: (818) 937-9120

**-Քոլոր ճանապարհներով Green Card եւ այլ գաղթականական ծառայութիւններ**

-Եթէ երբեւէ ունեցել էք խնդիրներ, որը կարող է ձեզ խանգարել քաղաքացիութեան հարցով, մի մտահոգուէք, մենք ձեզ կ'օգնենք ...

Passport and Immigration Photos



**Jenny Abrahamian**  
Թարգմանութիւններ՝ Հայերէն, Անգլերէն, Արաբերէն, Ռուսերէն, Պարսկերէն եւ այլն  
-Լիազօրագրեր/ Appostille


**Ծառայութիւններ**

-Հէշտ եւ կարճ ճանապարհով հիւանդութեան թոշակ SSI-SSA

-Medi-Cal

-CAPI, Sponsor-ով կամ առանց Sponsor-ի

**LIVE SCANS**



Fingerprinting


## Նոտար/Notary

**Վստահեցէք մեր տարիներու փորձառութեան եւ արդար աշխատանքին**

**Չեր գաղթականական եւ այլ հարցերու շուրջ ամէն հարցումի պատասխանը մեր մօտ կը գտնուի (Section 8, խնամակալ, եւ այլն)**



# ԱՐՓԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ 25-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻ



Լիազորել  
Նորարարել  
Ձեռափոխել

### ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐՍԵՆԵԱՆ

Լրացաւ ARPA (Analysis, Research and Planning for Armenia) Institute-ի, թարգմանաբար «Վերլուծութիւն Հետազոտութիւն եւ ծրագրաւորում Հայաստանի համար» հասարակական Հիմնարկի (Լոս Անձեյլոս) հիմնադրութեան 25 ամեակը:

ԱՐՓԱ-ն կեանքի կոչուեց Հայաստանի վերանկախացման ամենածանր ժամանակներին, 1992 թուականին, հայրենիքի եւ սփիւռքի գիտական եւ ճարտարագիտական շրջանակների կողմից ճանաչուած եւ յարգուած դոկտ. Յակոբ Փանոսեանի նախաձեռնութեամբ: Դոկտ. Փանոսեանն իր շուրջ հաւաքեց գիտութեան, ճարտարարուեստի եւ սնտեսութեան տարբեր ոլորտների մասնագէտ մտաւորականներին:

Բոլորին միաւորողը եղաւ նորանկախ հայրենիքի բարգաւաճ ապագայի տեսլականը՝ սփիւռքի մտաւոր կարողութիւնների օժանդակութեամբ եւ մասնակցութեամբ նպաստել հայրենիքի զարգացմանն ու վերելքին:

Հիմնադրումից քառորդ դար անց անվերապահօրէն կարող ենք հաստատել, որ ԱՐՓԱ-ն, հաւատարիմ որդեգրած իր առաքելութեանը, իր համեստ, սակայն տեսանելի մասնակցութիւնն է բերել հայրենի իրականութիւնից ներս: Նշենք հիմնադրութեան սկզբնական տարիներին իրագործուած կարեւոր աշխատանքներից մի քանիսը՝

• Մասնակցութիւն կազմակերպելու Մեծամորի հիւլէական ուժանիւթի կայանի վերագործարկման համաժողովը:

• Երեւանի էրեբունի հիւանդանոցում ստեղծուեց Սարգո Դիլքեանի անուան Արեան Պահեստանոցը (Blood Bank), յետագայում նոյնանման պահոց ստեղծուեց նաեւ Գիւմրիում:

• Հայաստանի եւ Արցախի աւելի քան 30,000 դպրոցներու երեխաների համար ստեղծուեց «Առողջ Ապրելակերպ» ուսուցման ծրագիրը: Այժմ այս ծրագիրը դասաւանդուած է Հայաստանի

հանրապետութեան դպրոցների 9րդ դասարանների աշակերտներին:

• Սերտ համագործակցութիւն է հաստատուել Հայաստանի բարձրագոյն կրթութեան երկու կարեւորագոյն հաստատութիւնների՝ ինչպէս նաեւ Գիտութիւնների ազգային կաճառի տիրոջութեւն գործող գիտահետազոտական հիմնարկութիւնների հետ: Հանգանակութիւնների միջոցով գնուել եւ այդ հաստատութիւններին են ուղարկուել արդիական թանկարժէք սարքաւորումներ:

Վերջին ինը տարիներին ճարտարագիտական, կիրառական գիտութիւնների եւ այլ բնագաւառների համալսարանական ուսանողութեան համար ԱՐՓԱ-ն կազմակերպում է նորարարական ամենամեայ մրցոյթներ: Լաւագոյններն արժանանում են դրամական պարգևատրումների: Մինչ այժմ, այս մրցոյթների մրցանակիրներին յատկացուել է աւելի քան \$50,000 ընհանուր պարգևավճար:

Ներկայումս, նորարարական մրցոյթներին մասնակցում են նաեւ մինչեւ 35 տարեկան գիտական աշխատողներ նոյնպէս:

Մեծ յաջողութեամբ իրագործուած են սփիւռքահայ եւ այլազգի ճանաչուած գիտնականների մասնակցութեան հեռավար դասընթացներն ու դասախօսութիւնների շարքերն հայրենի համալսարանների ուսանողութեան եւ դասախօսների համար: Տեղին է նշել, որ այլազգի գիտնականներն ու մասնագէտներն ուրախութեամբ են ընդառնում դասախօսութիւններ վարելու ԱՐՓԱ-ի խնդրանքին՝ իրենց բոլորովին անձանօթ հայաստանեան համալսարանների համար:

ԱՐՓԱ-ի նախաձեռնութեամբ եւ գործօն մասնակցութեամբ Հայաստանում իրագործուող կարեւոր նախագիծերի պէտք է նշել՝ ճարտարագիտական նոր միջոցների կիրառմամբ 14 քմ երկարութեամբ ոռոգման խողովակաշարի փորձարարական վերանորոգումը: Փորձարկման յաջողուած արդիւնքների դէպքում նշուած նորարարական միջոցը ստանալու

է լայն կիրառում: Ընթացքի մէջ է Հայաստանի մի քանի դպրոցներում գիտական մրցոյթներ կազմակերպելու ԱՐՓԱ-ի ծրագիրը: Կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնը խոստացել է սոյն ծրագիրն ընդգրկել հանրապետութեան բոլոր դպրոցներում:

ԱՐՓԱ-ն կարեւորում է գիտական գերարդիական նշանակութիւն ունեցող նանո-տեքնոլոգիական հետազոտական կեդրոնի ստեղծումը Հայաստանում:

Այս բնագաւառի Լոս Անձեյլոսաբնակ հայ մասնագէտներ, համագործակցաբար հայաստանեան գործընկերների հետ, մշակում են կեդրոն ստեղծելու ու այն սարքաւորելու անհրաժեշտ պայմանները:

Նախագծի իրականացումը կարօտ է դրամական զգալի ներդրման:

ԱՐՓԱ-ն յուսով է որ սփիւռքեան համայնքներն ու անհատ հովանաւորողներն ըմբռնուով են ընդառնալու համագաղային կարեւորութիւն ունեցող գիտական այս ծրագիրին:

Յաւելենք, որ տեղական գետնի վրայ սպասուած միջոցառումներ են ԱՐՓԱ-ի կազմակերպած ամենամեայ դասախօսութիւնները:

ԱՐՓԱ-ն գոյութեան իր 25 ամեայ յոբելեանը նշում է որպէս հայ իրականութեան մէջ ճանաչուած եւ զնահատուած արհեստավարժ կազմակերպութիւն:

Այն տարբեր ոլորտների մասնագէտների եւ գիտնականների ի մի եկած համերաշխ խումբ է:

Խոստովանենք որ ԱՐՓԱ-ի ազգուտ գործունէութեան հիմնական բեռն ընկած է իր նախագահի դոկտ. Յակոբ Փանոսեանի ուսերին: Նրա անդադրում եռանդն ու ամբողջ էութեամբ ԱՐՓԱ-ի ծրագրերի իրականացմանն ուղղուած նուիրաւորութիւնն ապէսցուցիչ են եւ արժանի պատշաճ զնահատականի:

Կարեւորը որ ԱՐՓԱ-ի հաւատում են:

Չափազանցած չեմ լինի եթէ ասեմ, որ այսօր ԱՐՓԱ-ն հայրենիք-սփիւռք գիտական, կրթական եւ ճարտարագիտական կապի մէջ խթանիչ օղակներից մէկն է: Այդ օղակը պէտք է օգտագործել կամըջելու ամերիկահայ ծանօթ եւ դեռեւս անձանօթ ներուժը՝ ի նպաստ հայրենիքի:

Այստեղ է, որ ինչ որ մէկի հրապարակ նետած ինքնամխիթարական ասոյթը թէ՛ «մեր հարեւաններից մէկը նախ ունի, միւսը՝ ծով, իսկ Հայաստանը՝ սփիւռք» պէտք է դառնայ իրականութիւն:

Ընդունենք, որ սփիւռքի դերակատարութիւն առաջմ անբաւարար է, անկազմակերպ, քառասյին:

Քար քցելու ժամանակը չէ, վախենամ երկու կողմի պարտեզներն էլ քարերով լցուեն:

ԱՐՓԱ-յի 25 ամեակը յոբելեանը նշուելու է Շաբաթ, Յուլիս 15, 2017ին, Կլենտէյլի Civic Auditorium- սրահում: Նախ առաւօտեան ժամը 10:00ից մինչեւ երեկոյեան ժամը 5:00ը տեղի է ունենալու գիտական համաժողով, ուր Հայաստանից, սփիւռքի տարբեր երկրներից ժամանած ուրտեղ գիտնականները ներկայացնելու են իրենց տեսակէտները եւ հայ հասարակութեանը յուզող այժմէական խնդիրների շուրջ:

Գիտաժողովի մուտքն ազատ է: Երեկոյեան ժամը 7:00ից սկսեալ, նոյն վայրում տեղի է ունենալու յոբելեանական ճաշկերույթ:

Ճաշկերույթի ընթացքին ԱՐՓԱ-ն իր զնահատանքն է յայտնելու ճանաչուած գործարար, արդիւնաբերող եւ բարերար տիար Ջաւէն Աքեանին, մարդ, ում կեանքի անցած ազնիւ ճանապարհը լատագոյն օրինակ կարող է ծառայել երիտասարդ սերնդի համար:

Վերջացնեմ՝ ԱՐՓԱ-յին ուղղուած է լազուցն մաղթանքներով:

Այն մեր ազգին անհրաժեշտ կազմակերպութիւնն է:

**ST. GREGORY ARMENIAN APOSTOLIC CHURCH PASADENA**

**KEF Time L.A.**

With "Internationally acclaimed" ED BILEZIKJIAN Ensemble  
**Ed Bilezikjian - Clarinet**  
**Antranig Kzirian - Oud & Harry Bogosian - Dumbegs**  
 Plus DJ spinning the top dance hits!

**Saturday, August 12, 7:30 P.M.**  
 At Saint Gregory "Geragos Hall" 2215 E. Colorado Blvd., Pasadena CA 91107

For tickets call:  
 Vera [Church Office]: 626-449-1523  
 Vahe: 562-715-8730

Donation: \$45  
 Includes Full Armenian Dinner!

### ՀԲԸՄԻ ՎԱՉԷ ԵՒ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Շարունակուած էջ 13-էն

Առաջնորդի ներկայացուցիչ՝ Գերայ. Տ. Տաճատ Մ. Վրդ. Երարմեան, որ աղօթքով եզրափակէ վկայականաց հանդիսութիւնը: Հայր սուրբը իր շնորհաւորութիւնները յայտնեց շրջանաւարտ աշակերտներուն, անոնց ծնողներուն, վարժարանիս տեսչութեան եւ ուսուցչական կազմին, եւ ապա "Պահպանիչ" ով օրհն-

նեց բոլոր ներկաները: Պահճ հասած էր իր աւարտին: Շրջանաւարտ աշակերտները հանդիսաւոր թափօրով ելք կատարեցին սրահէն, եւ միացան իրենց ծնողներուն, որոնք արտասուածոր աչքերով եւ ուրախութեամբ գեղուն անհամբեր կը սպասէին գիրկընդխառնման անմոռաց պահուան: Աւարտին տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն:



### ՅԱԶՈՂԱԿ ԿՆՈՋ 7 ՈՍԿԵ ԿԱՆՈՆ

-Սորվիր երջանկութիւն ճառագել: Երջանկութիւն ճառագող կինը ուժեղ մագնիս է տղամարդոց համար: Ապացուցուած է, որ եթէ երջանիկ ժպիտ «նկարես», կը մտնես անհրաժեշտ վիճակի մէջ, իսկ յետոյ կու գայ իրական երջանկութիւնը:

-Գիշեր-ցերեկ մի մտածեր այն մասին, թէ դուն որքան պէտք է բարձրացնես ինքնագնահատականը: Չափէն մեծ ցանկութիւնը երբեմն խոչընդոտ կը դառնայ սեփական ինքնաիրացման ճանապարհին: Ուղղակի ապրիր եւ հաւատա՛, որ կը հասնիս այն ամէնուն, զոր կը փափաքիս:

-Կորչի կատարելութեան աւելորդ ձգտումը: Արտօնէ դուն քեզի անկատար ըլլալ: Նոյնիսկ եթէ որեւէ բան ուրիշներէն վատ կ'ընես, ատոր իրաւունքը ունիս, դուն պարտաւոր չես ամէն ինչի մէջ իտէպալական ըլլալու:

-Մոռցիր վախերու մասին: Պատկերացուր, թէ տեղի ունեցած է այն, ինչէն դուն այնքան կը վախնայիր՝ ամենավատը: Նախապէս տարբերակներ մտածէ, թէ ինչպէս վարուիս այդ պարագային: Եւ յիշէ, որ ինքնագնահատականը բարձրացնելու համար օգտակար է որեւէ, նոյնիսկ բացասական փորձը:

-Գործերը մի յետաձգեր: Որքան երկար կը պատրաստուիս որեւէ բան սկսելու, այնքան անորոշ կը թուին դժուարութիւնները:

-Մի վախնար նոր բան սորվելէն եւ զայն փորձելէն: Դուն չես գիտեր, թէ երբ ատիկա քեզի ծառայութիւն պիտի մատուցանէ:

-Հետեւիր արտաքինիդ: Մարգարահ, լողաւզան, դիմալարդար, վարսալարդար: Ոչինչ այնքան չի բարձրացներ ինքնագնահատականը, որքան նոր կերպարը, նոր սանտրուածքը:

### ՈՒՐՅՈՎ ԹԵՅԻՆ ԲՈՒԺԻՉ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Ուրցը իւրապատուկ բոյս է, որ մարդկութեան յայտնի է հին ժամանակներէն: Անիկա ունի հաճելի համ եւ բուժիչ յատկանիշներ: Ուրցը ունի մանրէասպան, ցաւազրկող, պրոնիսները լայնցնող յատկանիշներ: Անիկա արագ կը վերականգնէ վնասուած քները, մարմինէն դուրս կը հանէ որդերը:

Ուրցը նաեւ կը կարգաւորէ նիւթափոխանակութիւնը, որ չափազանց կարեւոր է անոնց համար, որոնք կը հետեւին իրենց կշիռքին: Ուրցի չորցած ծաղիկներով թէյը խորհուրդ կը տրուի անոնց, որոնք կը տառապին անքնութենէ:

Ուրցով թէյը նաեւ կը հանգստացնէ ռոմաթիզմի եւ արթիտի ժամանակ յառաջացած ցաւերը: Այս բոյսը կ'օգտաւորուի թոքային շարք մը հիւանդութիւններու պարագային, օրինակ՝ ազմա, պրոնիտիս եւ այլն: Ուրցով ըմպելի



լինէր Քառորդ գաւաթ Չուրին աւելցուցէք 1 թ/դ չորցուած ուրց: Եւ ապա 10 վայրկեան: Լեցուցէք գաւաթի մէջ, աւելցուցէք եռացացած Չուր եւ 5-7 վայրկեան եւս ձգեցէք մնայ, ապա՝ քամեցէք ու վայելցեցէք համեղ թէյը:

Ուրցը, սակայն, խորհուրդ չի տրուիր կազթրիթ, ստամոքսի խոց, վահանագեղձի խնդիր, շաքարախտ ունեցող մարդոց: Յղիներուն եւ փոքրիկներուն խորհուրդ կը տրուի հարցնել բժիշկի կարծիքը:

### ԵԳԻՊՏԱՅՈՐԵՆԸ ԲՆՈՒԹԵԱՆ ԻՐԱԿԱՆ ՅՐԱՇՔՆ Է

Եգիպտացորենը միակ լայն սպառում ունեցող ուտելիքն է, որուն բոլոր մասերը ոսկի կը պարունակեն, 100 կրամ հատիկները կը պարունակեն 0.5 միքրոկրամ Au, մինչ մարդու մարմնի պահանջարկը կը տարուբերի 2-4 մկ սահմաններուն մէջ:

Ոսկիի ազդեցութիւնը մարմնին վրայ՝

\* Չափահաս մարդու մարմնին մէջ կայ մօտ 10 մկ Au, որուն մօտաւորապէս կէսը կը գտնուի ոսկորներուն մէջ, մնացեալը լեարդին ու երիկամունքներուն մէջ:

Ոսկիի կենսաբանական դերը մարդու մարմնին մէջ կարօտ է յետագայ ուսումնասիրութեան, սակայն յայտնի են որոշ օգտակար յատկութիւններ:

\* Անիկա կը խթանէ մարմնի մէջ պղինձի իւրացումը:

\* Կը նպաստէ խոնաւցնող յատուկ նիւթերու աշխուժացման:

\* Յատուկ հաշուարկուած չափերը կը կիրարկուին աթերոսքլերոզի, օսթիոստրոֆի, փարոտոնդոզի, լեարդի հիւանդութիւններու, ընկճախտի պարագային:

\* Ոսկիին կը զօրացնէ արծաթի հակաբորբոքային յատկութիւնները, ունի հակավարակային ազդեցութիւն:



\* Կը բարձրացնէ դիմադրողականութիւնը:

Ոսկիի եւ եօտի համադրութիւնը.

\* Եօտացուած ոսկին յայտնի է իբրեւ հակակարծրախտային (սքլերոզ) դեղորայք, որ չունի հակառակ ազդեցութիւններ եւ յաճախ կը կիրարկուի ծերացող մարմնին բնորոշ հիւանդութիւններու բուժման համար: Ասիկա հնագոյն ժամանակներէն յայտնի միջոց է:

\* Ոսկիի տարբեր՝ աղային միացումներու հիմքին վրայ կը պատրաստուի դեղորայք որոշ հիւանդութիւններու, ինչպէս փսորիակի հետեւանքով յառաջացած արթիտի բուժման համար: Նման դեղերը կրնան յառաջացնել թունաւորում՝ չարաչահելու պարագային:

### ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹԻՒՆ

#### ՈՒՏԵԼԻՔԻ ԶԳԱՅՆՈՏՈՒԹԻՒՆԸ-Allergy

Կարգ մը փոքրիկներ ուտելէ ետք կը զգան սիրտխառնուք, քերուրտուք կամ որեւէ այլ անկանոնութիւն: Ծնողքը գինք կ'ուղղեն զգայնոտութեան-allergy մասնագէտի: Կարգ մը քննութիւններ կատարելէ ետք մասնագէտ բժիշկը կը կազմէ ուտելիքներու ցանկ մը, որ կը պարունակէ փոքրիկին համար արգիւրուած ուտելիքներ, որոնք կը համարուին զգայնոտութեան պատճառը: Հարցը կը բարդանայ, երբ կարգ մը փոքրիկներ նոյնիսկ բժիշկին ցուցմունքներուն հետեւելէ ետք դարձեալ ցոյց կու տան զգայնոտութեան նշաններ: Կը կատարուի երկրորդ քննութիւն եւ յայտնի կը դառնայ թէ զգայնոտութեան պարագան կարծուածէն աւելի բարդ է: Արգիւրուած ուտելիքներու ցանկը կը մեծնայ:

Հարցը հոս այն է, որ կարգ մը քննութիւններ ճիշդ արդիւնքները

չեն տար: Սխալ քննութիւն կատարելու պարագային մենք կը ստանանք սխալ ախտորոշում: Հազարաւոր մարդիկ իրենք գիտենք հեռու կը պահեն կարգ մը ուտելիքներէ սխալ ախտորոշում կատարելէ ետք:

Մասնագէտներ կը յայտնեն թէ շատ մը պարագաներու մանկաբոյժը անծանօթ է այս սխալներուն: Այս քննութիւնները 20 տարիէ ի վեր կ'օգտագործուին: Սխալ ախտաճանաչման պատճառով շատ մը երեխաներ կ'ունենան ճնշուած-stressed կեանք մը: Երեխաներ եւ անոնց ծնողները կ'ըլլան անհանգիստ-anxious, սխալ ուտելիք չուտելու եւ կ'ըլլան միշտ զգոյշ արգիւրուած ուտելիք չուտելու համար: Ախտորոշումը պէտք է կատարուի ճիշդ ձևով մարդոց կեանքին մէջ յաւելեալ բարդութիւններ չստեղծելու համար:

### ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

#### ՍՆՆԴԱԿԱՆՈՆՆԵՐՈՒ ԺՍՏԱԿԱՆ ՅԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԶԵՐ ՈՒՂԵՂԻՆ ՎՐԱՅ

Մանդականոնի հետեւիլը դարձած է նորաձեւութիւն: Մարդիկ կ'այցելեն սննդականոնի մասնագէտներու, կը հետեւին խիստ ցուցմունքներու բարեձեւ մարմին ունենալու համար: Երբեմն այդ սննդականոնները կրնան ժխտական հետեւանքներ ունենալ մեր ուղեղի գործունէութեան վրայ: Ուղեղին նախասիրած ուտելիքներն են իւրով հարուստ, քիչ ածխաջրածին-carbohydrate պարունակողները: Ածխաջրածին պարունակող ուտելիքները՝ գոց գոյն շաքարը, քինոսան, լման հացը եւ այլն կրնան

երկար ժամանակի վրայ վնասել մեր ուղեղին եւ պատճառել շատ մը հիւանդութիւններ ինչպէս ալզհայմըր, տիմենիթիս, adhd, գլխու ցաւեր: Այս ուտելիքներու օգտագործումը նուազեցնելով եւ լաւ քոլեսթերոլ պարունակող ուտելիքներ օգտագործելով մենք պիտի օգնենք մեր ուղեղի լաւ աշխատանքին: Ըստ մասնագէտներու շաքարի շատ օգտագործումը եւ վատ քոլեսթերոլ պարունակող ուտելիքներու օգտագործումն է ուղեղի եւ սրտանօթային անհանգստութիւններու իսկական պատճառը:

### ԱՄԵՆ ՕՐ ԼՈՒԿԻ ԻՒԹ ԽՄԵԼՈՒ 9 ՊԱՏՃԱՌ

Լոլիկը յաճախ կ'օգտագործուի աղցաններու, ապուրներու եւ թացաններու մէջ: Անիկա նաեւ կ'օգտագործուի հիւթ պատրաստելու համար: Սակայն քիչերը գիտեն լոլիկի հիւթի սննդարար յատկանիշներուն մասին: Լոլիկի հիւթը կը պարունակէ շարք մը բաղադրիչներ, եւ, եթէ գայն խմէք կանոնաւոր կերպով, պիտի նկատէք ընդհանուր առողջութեան բարելաւում:

1. Լոլիկի հիւթը կը պարունակէ մեծ քանակով վիթամիններ: Թարմ լոլիկի հիւթը հրաշալի աղբիւր է վիթամին A-ի եւ C-ի: Կանոնաւոր օգտագործման պարագային կը կանխարգիլէք տեսողութեան հետ կապուած խնդիրները եւ կ'ամրացնէք դիմադրողականութիւնը, կ'ամրացնէք ոսկորներն ու ակունքները:

2. Կը կանխարգիլէ քաղցկեղը: Լոլիկը լիգորինի աղբիւր է, որ կը կանխարգիլէ քանի մը տեսակ քաղցկեղներու տարածումը, ներառեալ՝ թոքերու քաղցկեղ, կրծքագեղձի քաղցկեղ, շագանակագեղձի քաղցկեղ եւ ենթաստամոքսային գեղձի քաղցկեղ:

3. Կը կանխարգիլէ սրտի հիւանդութիւնները: Լոլիկը հարուստ է վիթամին B6-ով, իսկ հիւթը լաւագոյն կանխարգիլիչ միջոցն է, երբ խօսքը կը վերաբերի սրտի հիւանդութիւններուն:

4. Լոլիկի հիւթը կ'իջեցնէ քոլեսթերոլի մակարդակը: Ոչ կանոնաւոր սննդականոններու պատճառով շատերը ունին քոլեսթերոլի աւելուած խնդիրներ: Լոլիկի հիւթը հարուստ է մանրաթելերով, որոնք

կը բարձրացնեն լաւ քոլեսթերոլի մակարդակը եւ կ'իջեցնեն վատը:

5. Լոլիկի հիւթը կ'օգնէ ազատելու աւելորդ կշիռքէն: Լոլիկի հիւթի մանրաթելերը յագեցուածութեան զգացողութիւն կու տան եւ կ'օգնեն, երբ սննդականոնի կը հետեւիք: Այս հիւթը նաեւ կը սնուցանէ մարմինը սննդարար տարրերով, որոնք դրական ազդեցութիւն ունին ամբողջ մարմնին վրայ:

6. Լոլիկի հիւթը կը հեռացնէ թոյները: Դժբախտաբար, մեր մարմինը լի է թոյներով եւ տարբեր յաւելումներով: Լոլիկը կը պարունակէ քլոր եւ ծծումբ, որոնք կը բարելաւեն երիկամներու եւ լեարդի աշխատանքը:

7. Անիկա կը վերացնէ ազատ ռատիքալները: Ազատ ռատիքալներու յառաջացումը կանխելու համար, օրական պէտք է մէկ գաւաթ լոլիկի հիւթ խմել: Ազատ ռատիքալները շատ վնասակար են, անոնք կրնան նոյնիսկ քաղցկեղի յանգեցնել: Լոլիկը հակաթոյներու հրաշալի աղբիւր է, որ կը կանխարգիլէ ազատ ռատիքալներու յառաջացումն ու անոնց վատ ազդեցութիւնը:

8. Լոլիկի հիւթը կը բարելաւէ մորթը: Չայն կրնաք քսել մորթին վրայ: Լոլիկի հիւթը կը ճերմկցնէ մորթը, կը կանխարգիլէ բշտիկները, կը ծածկէ ծակոտիները:

9. Անիկա կը խթանէ աղիքներուն աշխատանքը: Ամբողջ աշխարհի մէջ միլիոնաւոր մարդիկ ունին աղիքներու խնդիրներ: Այս պարագային լաւագոյն միջոցը լոլիկի հիւթն է:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.



# ՄԵՍՐՈՊԻ ՈՒ ՍԱՅԱԿԻ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՏՕՆ

»Ճանաչել Ձիմաստուփուն եւ Ձխրատ, Իմանալ Ձբանս Չանճարոյ«

Հայոց «Առաքելական Եկեղեցի»-ն, «Եկեղեցու Հայրերի» շարքին էր դասել հոգեւոր ու մշակութային գործի նուիրեալներ՝ «Սրբոց Թարգմանչաց» գործիչներին: Տարին երկու անգամ տօնախմբուում է նրանց քանքարների արարման արեւալույս լի շատակը: Յունիսի վերջին-Յուլիսի սկզբներին Ամատունի իշխանների Օշական աւանում միասնաբար տօնախմբում են իմաստուն վարդապետներ՝ Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի տօնը: Հոկտեմբերի ու թիւն տօնախմբում են Սահակի ու Մեսրոպ Մաշտոցի ուսուցանած իմաստուն աշակերտների՝ «Սրբոց Թարգմանչաց» տօնը:

Արմինա-Հայաստան աշխարհում՝ մարել էր Արմինա երկրի Արամէ արքայի թոռան որդի՝ Անուշաւան-Իշպուհինի թագաւորի յուշը: Ասորեստանի արքունիքում պատանդ եղած առեն շիտու էր պալատի գիտական-գրական շրջանակների հետ, ծանօթացել «Սեպագրութեան» արուեստի հնարքներին: Խօսքով ու գործով հանճարեղ արքան, նշանաւորուել էր նաեւ որպէս՝ քուրմարքայ: Իր հանճարեղ մտալոգոսմով, Ասորեստանի 3000 սեպագիր խրթին նշանագրերի կարգը խիստ կրճատել էր, ապա ստեղծել իր թագաւորած երկրի մայրենի լեզուի վեց հարիւր սեպագիր նշանակագրերով տարբերակը: Անուշաւան-Իշպուհինի արքան իր նախնիների Արմինա երկրի մարդկանց խօսակցական լեզուն վերածել էր գրաւոր լեզուի: Անուշաւան-Իշպուհինի ու յաջորդ գահակալները, այդ նոր սեպագիր նշանակագրերով իրենց նուաճումների արձանագրութիւններն էին գրել, լեզուն էլ Ասորերէնից փոխել երկրի մարդկանց խօսած լեզուով: Այդ աջն լեզուն էր, որ հագար-հագար տարիներ յետոյ էլ Արմինա-Հայաստան երկրի մարդիկ պիտի խօսէին: Այդպէս էր, որ Տուշպա-Վան ոստանի միջնաբերդ տանող քարէ դռան ժայռին գրել են իրենց "Հաշտից" ցուցակի անունները, գլխաւորութեամբ Խալդէ-Հայկ աստուծոյ, յաջորդաբար աւագ ու կրտսեր աստուածների զիցակարգութիւնը: Դուռ, որ իրենց հեռու նախնին վշտացած աշխարհից, իր նժուգով մտել քարանձաւ, իր վրայ փակել այն: Քրմական պատգամախօս Անուշաւան-Իշպուհինի արքան, սօսեաց անտառակի ծառերի սօսափիւնից արդեօք չէ՞ր գուշակել, որ թամբած ձին հեծած իրենց նախնին պատուելու էր քարէ դուռը, խաղաղութեան ու սիրոյ լոյս վառելու աշխարհի մարդկանց սրտերին:

Մարել էին նաեւ Արմինայի նախնիների հաւատի գերագոյն աստուծոյ ատենադպիր, արուեստների, գիտութիւնների, դպրութիւնն ու գրի հովանաւոր Տիր աստուծոյ ուսմունքի յուշը: Ասացէ՛ք, ատենադպիրը առանց գրերի կը լինէ՞ր... : Արմինա-Հայաստան աշխարհի մարդկանց բանաւոր խօսքը՝ «Գրաբար» ոսկեղենիկ Հայերէն լեզուն էր: Դպրոցներում ուսուցանել էին՝ Յունարէն, Ասորերէն, Պարսկերէն լեզուներ: Նոր հաւատի ծէսերը կատարել էին Արմինա-Հայ մարդկանց անհասկանալի այդ լեզուներով: Մեսրոպ... Կորիւն նրան կոչել էր Մաշտոց, Խորենացին Մեսրոպ: Աւանդուում է, որ «Մաշտոց» բառը հեթանոս նախնիների «Արթագիրք» էր նշանակել:

Հայոց Խորով Շրորդ թագաւորի ատեն արքունիքում ծառայել էր գիւղացի մի Հայ մարդ, Մեսրոպ էր նրա անունը: Ծնուել էր Տարօն գաւառի Հացեկաց գիւղում, առաքինի ու ուսեալ վարդան անունով մարդու որդին էր: Մանկութեան հասկում լաւ կրթութիւն էր ստացել, ուսանել Պարսկերէն ու Ասորերէն լեզուներ, ծանօթացել Յունարէն լեզուին, երեւի Լուսաւորիչի սերունդից Ներսէս Մեծ կաթողիկոսի հիմնադրած դպրոցներից մէկի աշակերտն էր եղել: Ուսումը աւարտելով, ծննդավայրից գնացել Այրարատ գաւառի վարդապատ քաղաք, արքունիքում գիտութեան ծառայութեան մտել: Շատ լեզուների տիրապետող Տարօնցու հոգում էր մարել գրասիրութիւնը, ջանասէր աշխատասիրութեամբ դարձել թագաւորական դիւանի գրագիր: Արքունիքում նրան ծանօթացրել էին աշխարհիկ կարգերի հետ, գրագրի պաշտօնով վարչական աշխարհն էր իր համար բացուել: Տարօնցի Հայ Մեսրոպի, գրադեցրած պաշտօնը երկրի քաղաքական ու ներքին կեանքը ճանաչելու լաւ առիթ էր հանդիսացել: Պալատական իշխանութիւնը էր կարողացել բռնադատել Մեսրոպի հոգին: Նոյն Խորով թագաւորի ատեն, նորէն ասպարէզ էր ելել Լուսաւորիչի տոհմը, կաթողիկոսական աթոռին էր Ներսէս Մեծի որդի Սահակը: Նրա ճգնաւորական հակումով կեանքը ազդեցութիւն էր գործել արքունի դիւանադպրի վրայ: Մեսրոպ թողել էր պալատական դիւանի պաշտօնը, հոգեւորականի կոչում ստանալով, սկսել ճգնաւորական կեանք վարել:

Մեսրոպ... ճգնաւորը էր հեռացել աշխարհից, մարդկանցից, աղօթքով հոգու փրկութեան համար էր տառապել: Հաւաքել էր աշակերտներ, նրանց միտքը լուսաւորելու համար քրիստոնէութիւնը քարոզել: Անսպառ եռանդով ու գիտելիքներով լցուած իր խօսքը հասկանալի էր դարձրել աշակերտներին: Խորենացին վկայել էր, որ Մեսրոպը եկեղեցիներում կարդացել էր Ասորերէն գրքերը, յետոյ էլ այն Հայերէն թարգմանել: Մեսրոպ, իր առաքելութիւնը գլխաւորապէս իրականացրել էր Հայոց աշխարհի արեւելեան ծայրամասի գաւառներում: Նրա ատեն այնտեղ տիրում էր անկարգ վիճակ: Սիւնիքի ու Արցախի անմատչելի բարձրութիւնները, կլիմայական խիստ պայմանները բնակիչների համար ստեղծել էին մեկուսի վիճակ, հնապաշտ աւանդութիւններ: Այնտեղ ապրող մարդիկ պայքար էին մղել իրենց ապրուստը հոգալու համար, մտաւոր կեանքի պահանջ էր եղել: Այդ աշխարհում Արմինա-Հայեր պահպանել էին իրենց նախնիների հաւատը, իրենց աստուածների իմաստութեան պաշտամունքը անդառնալի էր թուացել: Մեսրոպ, այդ անմատչելի, հեռու տեղում էր ընտրել իր քարոզչութեան ասպարէզը:

Մեսրոպ... քարոզչութիւնը սկսել էր տեղի Գողթան գաւառից: Սիւնիքի ու Արցախի աշխարհների նման անլոյս աշխարհ էր եղել այն, նրանց մարդկանց միտքը լուսաւոր էր: Գողթան գաւառ... մինչեւ Մեսրոպ նրա մարդիկ հաւատարիմ էին մնացել իրենց հին աստուածների հաւատի իմաստութեանը, իրենց հին աստուածների բնութեան երեւոյթների պաշտամունքին: Գողթան գաւառը եղել էր նախնիների աստուածների, նրանց հերոսների աւանդապահ, նրանց հաւատի ոգեւորո-

ղը: Գողթան իմաստունների երգերում, բանաստեղծական յօրինումներում արտայայտուել էին Արմինա-Հայերի իմաստութիւնը, նրանց հին հաւատքի աստուածների պաշտամունքը: Այն վերածուում էր երգի, որը պահում էր իրենց անցեալը, էջը թողում որ մեռնէր իրենց նախնիների յուշը: Մովսէս Խորենացին էր նրանց եգերի ու բանահիւսութեան մի քանի պատառիկներ իր մատենում հաղորդել՝ վահագնի ծնունդը, Արտաշէսի ու Սաթենիկի ամուսնութեան հանդէս:

Մեսրոպ... այդ լեռներում դիմազարուել էր նոր հաւատի քարոզչութեան անհնարինութիւնը, դիմել տեղի իշխանների աջակցութեանը: Կորիւն այսպէս էր գրել «Այն ժամանակ Աստուած տուեց, որ Սիւնիքի իշխանութեան գլուխն անցաւ քաջ Սիսական Վասակը, խելացի ու հանճարեղ եւ կանխագէտ, աստուածային իմաստութեան շնորքով օժտուած մի մարդ, նա շատ նպաստեց աւետարանի քարոզչութեանը» Քրիստոնէութեան քարոզչութիւնը կատարուել էր հրամանով, գիտութի, իշխանութեան պարտադրանքի գորութեամբ: Նոյնը, նրանից հարիւր տարիներ առաջ էլ իշխանութեան գորութեանը, բուն ուժով տարածուել էր օտար հաւատը: Հայք երկրի մարդիկ իրենց հաւատի պաշտպանութեան համար հարիւր տարիներ կռիւ էին տուել իշխանութեան բռնութեանը, պարտուել էին, սպանել, դաւանափոխ արել քրմական դասին, քանդել նրանց աստուածների մեհեանները, յափշտակել տեղի գանձերը, ոչնչացրել գիր, երգ, աշխարհի ու տիեզերքի ընկալման իմաստութեան մատեաններ: Կրօնափոխ էին արել Հայքին, հաւատն էր օտար, թագաւորն ու կրօնափոխ անողն էին օտար:

Մեսրոպ... իմաստուն, զգայուն սիրտ ունէր, «Տրտմութիւն է ինձ եւ իմ սրտի ցաւերը անպակաս են իմ եղբայրների ու ազգականների համար» պիտի խոստովանէր իմաստունը: Մտորել էր թէ ինչու էր հայրենի երկրում անգթութիւն ու հարկադրանք կատարուել, մարդու համար հարազատ էր այն, ինչ հասկանում էր, ինչին պաշտամունք ունէր: Համոզուել էր, որ քարոզչութիւնը իզուր էր, մանկանց սրտերում փոքրուց պիտի սերմանուէր իրենը, ոչ թէ օտարինը: Կիսատ թողել սկսած գործը, վերադարձել վարդապատ, միտք էր ծագել «Գիր» ստեղծել իր ազգի մտքի լուսաւորութեան համար:

Մեսրոպ... դիմել էր Հայոց կաթողիկոս Սահակին: Հայաստանում ամենազարգացած մարդն էր նա: Սիրով ու մեծ ակնածանքով էր ընդունել նրան, ինքն էլ նոյնը մտածած ու եզրակացրած էր եղել: Ի դէմս Սահակ կաթողիկոսի՝ Մեսրոպ հովանաւոր ու աջակից էր գտել: Հայաստանում Արշակունեաց տիրապետութեան նախափերջին թագաոր Վուսնայուհի արքան միացել էր նրանց, որը նոյնպէս զգացել էր ժամանակի պահանջը: Նրա թագաւորութեան շրջանին Հայաստան երկիրը խաղաղուէր էր: Ժողովուրդի գոյութեան յարատեւութիւնը պահպանելու համար հարկաւոր էր մի միջոց գտնել, որը պարէր մարդկանց սրտերի ու մտքերի մէջ: Կաթողիկոսարանում խորհրդածութիւններ էին եղել, յայտնի էր դարձել, որ ձեռնարկուելիք գործը դժուար էր, մասնակիցներից ոչ ոք նրա կատարման իրագործմանը առաջարկութիւն էր կատարել: Թագաւորը, Միջագետքում Պարսկաստանի ու Բիւզանդիոնի միջեւ հաշ-

տարար առաքելութեան ատեն իմացել էր, որ Դանիել անունով մի ասորի եպիսկոպոս «Հայերէն» տառեր ունէր: Հայոց պատմագիրներ այն ստոյգ չէին աւանդել, պարզ էր եղել, որ արդեօք մինչեւ Մեսրոպը Հայերէն այբուբեն եղե՞լ էր: Հայերի բանասէրներ, պատմագիրներ «Տառացի իմաստի վրայ» ընդունում են, որ հնում տառեր գոյութիւն ունեցել էին, սակայն հաստատում, որ նախքան Մեսրոպ Հայերէն գրականութիւն գոյութիւն չի ունեցել: Դանիելի տառերը պիտանի չէին եղել, նրանք չէին գործածուել պալատական դիւանի գրագրութիւններում, որտեղ այն կատարում էր Յունարէն, Պարսկերէն, Ասորերէն լեզուներով:

Սահակ կաթողիկոսի ու Մեսրոպի խնդրանքով թագաւորը Դանիելի մօտից բերել տալիս նրա տառերը: Երեխաներ են հաւաքում, բացուում է առաջին դպրոցը, Հայոց առաջին ուսուցիչ Մեսրոպը «Վարժապետ» դառնում, սկսում նրանց մայրենի լեզու սովորեցնել: Մեսրոպ եզրակացնում է, որ Դանիելի տառերով լեզու սովորեցնել հնարաւոր էր: Մեսրոպ ու Սահակ անկարող էին եղել յաղթահարել այդ վիճակը, վարդապատում ոչ ոք կարողանում էր օգնել: Մեսրոպ մտածում էր եթէ տեղում յաջողութիւն էր գտել, յարկաւոր էր այն որոնել դրսի հմուտ մարդկանց մոտ:

Մեսրոպ... մի քանի աշակերտներով մեկնում երկրից դուրս: Վուսնայուհի թագաւորը ու Սահակ կաթողիկոսը բարի մաղթանքներով են ճանապարհում նրանց: Գնում էր «Օսրոյենէ» ասորական պետութեան ոստան՝ Եդեսիա: Հանդիպում է նշանաւոր հոգեւորականների հետ, բարեհաճ ընդունելութիւն գտնում: Համոզուել էր, որ ոչ ոք օգնական պիտի լինէր իրեն: Աշակերտների մի մասին Եդեսիա թողուել Ասորերէն սովորելու, մի մասին էլ իր հետ Սամոսատ տանում յունարէն ուսանելու: Մեսրոպի աշակերտ, նրա «Վարք» գրքի լեզունակ Կորիւնը նկարագրում նրա հոգեկան ու մտային տուայտանքը: Մեսրոպի իր նպատակին հասնելու անդադրում նուիրումը, իր գաղափարները տեսիլների կերպարանք են ստանում, հոգու ու մտքի կարողութիւնը ձեւաւորում է տարիների խորհուրդը: Աւարտում է հոգու երկունքը, երագած տառերը կերպարուել էին մտքում, ձեւ տուել մագաղաթի վրայ: Այն հարկաւոր էր երկրում քրիստոնէութեան տարածման, Հայոց աշխարհը աստուածապաշտութեան տանելուն: Կորիւն ու Հայ մատենագիրներ այն վերածել էին աստուածային հրաշապատմամբ... քրիստոնէական հաւատքի անիրական բացատրութիւնն էր այն, ամէն արտասովոր գործ համարում էին երկնային հրաշք: Աշխարհում հրաշքներ չեն լինում, աստուածային ոչինչ, ամէն ինչ բանականութեան արդիւնք է:

Ըստ պատմաբան Լէօ-ի, ոմանք եզրակացրել են, որ Հայոց այբուբենի համար նախատիպ է եղել Յունականը, ըստ ուրիշների պարսից կամ գենդական ու փեհլեւի գրերը: Պատմաբան Լէօ-ն Յունականի կողմնակից էր եղել, ճշտելով, որ Հայերէն այբուբեն տառերը դասաւորուած են ինչպէս Յունականը, գրուում են ձախից աջ: Մեսրոպի մեծութիւնը չի պակասում, որ Հայոց այբուբենի տառերը նմանութիւն ունեն ուրիշ ազգերի տառերի հետ եւ որ այն ընդհանուր երեւոյթ է: Հայքում մի







### Հենրիխ Մխիթարեանը «Մանչեսթեր Յունայթեդի» Հետ ժամանել է ԱՄՆ



«Մանչեսթեր Յունայթեդը» Յուլիսի 9-ին մեկնել է ԱՄՆ, որտեղ կայանալիք շրջափուլի ընթացքում կ'անցկացնի մի շարք ընկերական խաղեր: Անգլիական ակումբի կազմում մեկնել են 27 ֆուտբոլիստներ, այդ թվում՝ Հայաստանի ազգային հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը, որը ֆէյսբուքեան էջում հրապարակել է լուսանկարներ եւ կատարել հետեւեալ գրառումը. «Պատրաստ եմ մեր մինչմրցաշրջանային հաւաքին»:

Ինքնաթիռում Մխիթարեանի կողքին նստած է եղել շուկոյ պաշտպան Վիկտոր Լինդելֆը, որը վերջերս պորտուգալական «Բենֆիկայից» է տեղափոխուել «Մանչեսթեր Յունայթեդ»:

«Մանչեսթեր Յունայթեդն» ԱՄՆ-ում առաջին ընկերական խաղը կ'անցկացնի Յուլիսի 16-ին՝ ուժերը չափելով «Լոս Անճելոս Գեյաքսի» հետ:

### Ուեյն Ռունին Տեղափոխուեց «Էվերտոն»

«Մանչեսթեր Յունայթեդի» աւագ Ուեյն Ռունին տեղափոխուել է անգլիական «Էվերտոն», հաղորդում է ակումբի կայքը:

Անգլիայի հաւաքականի 31-ամեայ յարձակուողը լիվերպուլեան ակումբի հետ կնքել է 2 տարուայ պայմանագիր: Գործարքի ֆինանսական կողմը չի հրապարակուում:

«Էվերտոնում» անգլիացին ընտրել է 10 համարի մարզաշապիկը, որը պատկանում էր «Մանչեսթեր Յունայթեդ» տեղափոխուած բելգիացի յարձակուող Ռոմելու Լուկակուին:

Ուեյն Ռունին կարիերան սկսել է հենց «Էվերտոնում», որտեղից 2004-ին տեղափոխուել է «Մանչեսթեր Յունայթեդ»: Նրա պայմանագիրը մանչեսթերեան թիմի հետ նախատեսուում էր մինչեւ 2019 թուականը: Անգլիացին 253 գոլով դարձել է «Մանչեսթեր Յունայթեդի» պատմական լաւագոյն ումբարկուս:

«Մանչեսթեր Յունայթեդի» կազմում յարձակուողը 5 անգամ դարձել է Անգլիայի ախոյեան, յաղթել Ախոյեանների լիգայում, Անգլիայի Գաւաթում, Եւրոպայի լիգայում ու աշխարհի ակումբային առաջնութիւնում, 3 անգամ նուաճել Անգլիական լիգայի գաւաթը ու 4 անգամ դարձել երկրի սուպերգաւաթակիր:



### «Լոս Անճելոս Գեյաքսին» Ցանկանում է Ձեռք Բերել Եւրա Մովսիսեանին

Ամերիկեան «Ռեալ Սոլթ Լեյքի» յարձակուող Եւրա Մովսիսեանն առաջիկայում կարող է փոխել ակումբը:

Rslsoapbox.com-ը, յղում անելով Four Four Two լրագրող Փոլ Տենորիոյին, հաղորդում է, որ 29-ամեայ հայ ֆուտբոլիստի ծառայութիւններով հետաքրքրուած է ՄԼՍ-ի «Լոս Անճելոս Գեյաքսի» ակումբը, որի դարպասը Մովսիսեանը գրաւել էր նախորդ խաղում:

Ընթացիկ մրցաշրջանի 20 հանգիստներում Եւրա Մովսիսեանը «Ռեալ Սոլթ Լեյքում» խփել է 6 կոլ: Վերջերս ֆուտբոլիստը դժգոհութիւն էր յայտնել նոր գլխաւոր մարզիչի օրօք իր կարգավիճակից թիմում:



### ՓԱՍՍԻՆԱՅԻ Հ.Մ.Մ. ԴԱՐՁԵԱԼ ՅԱՂԹԱԿԱՆ

Ինչպէս նախապէս հաղորդած էինք անցեալ կիրակի, Յուլիսի 9ին, 2017 ֆուտբոլի կիսաեզրափակիչ մրցումը տեղի ունեցաւ Փասատինայի Հ.Մ.Մ.-Անժել եւ «Ինթեր Լոս Անճելոս խումբերու միջեւ, Rio La Park-ի մէջ 1900 N. San Fernando Road, Los: Սոյն յատկանշական խաղն աւարտեցաւ Հ.Մ.Մ.-Անժելի յաղթանակով 5-2:



Հ.Մ.Մ.-Անժելի յաջորդ մրցումը տեղի պիտի ունենայ Յուլիսի 16ին, Սընլանտի Park Rangers խումբին դէմ կէսօրէ ետք ժամը 1:00ին, Rio La Park-ի մէջ 1900 N. San Fernando Road, Los Angeles CA, 90023: Հ.Մ.Մ.ի համակիրներ եկէք ներկայ գտնուինք, միասին քաջալերու եւ վայելելու սոյն աւարտական խաղը:

### Կանանց Հայաստանի Խումբը Տարել է Երրորդ Անընդմէջ Յաղթանակը



Մալթայում աւարտին մօտեցող բասկետբոլի կանանց Եւրոպայի մինչեւ 18 տարեկանների Շ դիվիզիոնի առաջնութիւնում Հայաստանի հաւաքականն ապահովել է երկրորդ տեղը:

Յուլիսի 9-ին կայացած չորրորդ խաղում վահագն Յարութիւնեանի գլխաւորած խումբը 68:52 հաշուով յաղթել է Կոսովոյի հաւաքականին՝ տանելով անընդմէջ յաղթանակը:

Հայաստանի հաւաքականն ապահովել է երկրորդ տեղը, իսկ առաջնութեան առաջատար Կիպրոսը վերջին խաղում մրցելու է Ջիբրալթարի հետ:

### FIDE Grand Prix. Լեւոն Արոնեանը Կես Միաւոր Ետ է Առաջատարներից

Շուեյցարիայի Ժընեւ քաղաքում շարունակուող FIDE Grand Prix երրորդ մրցաշարի 5-րդ տուրից յետոյ Լեւոն Արոնեանը 3 միաւորով բաժանուած է 3-6-րդ տեղերը: Նոյնքան միաւոր ունեն նաեւ ռուս Պյոտր Սվիդլերը, հնդիկ Պանտեյա Հարիկրիշնան ու Շաքրիյար Մամեդյարովը: Մրցաշարային աղիւսակը գլխաւորում են ռուսաստանցի Ալեքսանդր Գրիշչուկն ու Թէյմուր Ռաջաբովը, որոնք հաւաքել են 3,5-ական միաւոր:



Նախորդ 5 պարտիաներում հայկական շախմատի առաջատարը ոչ ոքի է խաղացել չինացի Լի Չաոյի, ադրբեջանցի Թէյմուր Ռաջաբովի ու ռուսաստանցիներ Ալեքսանդր Գրիշչուկի եւ Պյոտր Սվիդլերի հետ, ինչպէս նաեւ յաղթել ռուս Դմիտրի Եակովենկոյին:

Յուլիսի 11-ը մրցաշարում հանգստեան օր է: Յուլիսի 12-ին կայանալիք 6-րդ տուրում Լեւոն Արոնեանը սպիտակներով կը խաղայ Պանտեյա Հարիկրիշնայի հետ:

Յիշեցնենք, որ 9 տուրով անցկացուող մրցաշարին մասնակցում են 18 շախմատիստներ:

### Գերմանիայի Հաւաքականի Պաշտպանը Տեղափոխուեց «Չելսի»

Լոնտոնի «Չելսին» պաշտօնապէս յայտարարել է իտալական «Ռոմայի» ու Գերմանիայի հաւաքականի պաշտպան Անտոնիօ Ռիւդիգերի տեղափոխութեան մասին:

24-ամեայ ֆուտբոլիստը 5 տարուայ պայմանագիր է կնքել անգլիական ակումբի հետ, որի կազմում հանդէս կը գայ 2 համարի մարզաշապիկով:

Ռիւդիգերը 2015-ին գերմանական «Շտուտգարտից» էր տեղափոխուել «Ռոմա», որի կազմում անցկացրել է 72 հանդիպում:

SYRIAN ARMENIAN RELIEF FUND Save Support Sustain P.O. Box 1948 Glendale, CA 91209-1948 www.syrianarmenianrelieffund.org